

~~Հանրաքաղաք~~

~~Հյուսիս~~

Վ. Ա. ՀԱՆ ԲՈՒԹՈՎ ԵՆՑ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՆՅՈՒ ՅՈՐԳ

891.99

891.99
P-71

22.04.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

31386

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԻՆՔԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4306
ԳՐԱՌԵՊ. 303 Բ. ՏԻՐԱԺ 550.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԻՆՔԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԻՆՔԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

59168-66



Յերեք ուր եր, վոր գիշերում էյի Մաղխոն Սկուար պարտեզում: Գեկ-տեմբերի սկիզբն եր. կես գիշերից հետո ամպերը պատում էյին յերկինքը, դանդաղորեն, բայց համառ կերպով իջնում էյին ցած և իբրև թեթև մշուշ, պաշարում էյին յերկինք քերող շենքերը, մտնում էյին ամեն մի ծակ, գըր-կում էյին բյուրավոր լույսերը, վորոնք ամպերի միջից յերևում էյին ինչ-պես ծովն քնկած աստղեր: Սկսում էյի ամբողջ մարմնովս դողալ խուլ, անշոշափելի խոնավությունից, կամաց, կամաց կծկվում էյի, ուզում էյի, վոր շորերիս ամեն մի մասնիկը դիպչի մարմնիս, հավաքում էյի պարտեզը նստարանների վրա մոռացված կամ լքված լրագրերը, ծալում, դնում էյի նստարանին և նստում վրան, բայց վիճակի վո՛չ մի փոփոխություն. վորքան ժամերը առաջանում էյին, ավելի էյի մրսում, մրսում եր մինչև անգամ թե-վերիս աակը, վերջապես վտտի էյի կանգնում, քայլում անորոշ ուղղու-թյամբ, կանգ էյի առնում գիշերային ճաշարաններից մեկի առաջ, համար-ձակ ներս մտնում: Ճաք եր այնտեղ, այնպիսի դյուրեկան տաքություն, վո-րի նմանը մարդ միայն գգում և իր մոր գրկում ճաշարանում մի պահ կանգնում էյի պատից կախված մենյուի առաջ, անյերևակայելի դանդաղի-տությամբ կարգում, վորպեսզի ժամանակ անցնի և ավելի տաքանամ ու վերջ ի վերջո՞ «չհավանելով» վո՛չ մի պատրաստի ճաշի, թողնում, դուրս էյի գալիս յերկրորդ, յերրորդ, չորրորդ և անվերջ ճաշարաններ մտնելով՝ սպանելով ժամանակը՝ մինչև լուսանար:

Նյու Յորկի բյուրավոր լույսերը շարունակում էյին լողալ կապույտ մշուշի մեջ, ավտոմոբիլները արագ թռչում էյին, մուշտակների մեջ փա-թաթված գուլգեր անցնում էյին ուրախ, բարձր և անհույս ծիծաղելով, պա-րասրահները, մյուզիկ հուրերը շարունակում էյին հրձվել ամբողջ գիշերը մի տեսակ մաշումի, ցոփության իրախճանք, վոր գնալով աճում եր և դառնում կլանող ալիք:

Հաճախորդներ փնտրող կանայք մոտենում էյին ինձ, ուրախ ու մարմ-նահարույց, քայլում էյին ինձ հետ մի կամ յերկու անկյուն, և վերջապես հույսերը կտրում ինձանից և բաժանվում արհամարական մի խոսք նետելով այն յերիտասարդին, վոր «գգացում» չունի, «չի ուզում կյանքը վայելել» կամ «յերևի սիրաչափված ե»: Նրանցից վոմանք, իրենց մարմինների ան-հաղթ ուժին վստահ, պարտված ասպետի նման գայրանում էյին, մի մի հայ-հոյանք չպրտում ու անցնում:

Կանգնում էյի ելեքտրական լույսի սյունի տակ, բարակ, թեթև վերար-կուս աշխատելով ավելի ու ավելի կծկել, սեղմել մարմնիս: Ելեքտրական

լույսի տակ, ստար, անձանոթ աշխարհի հորձանքում, յերազում էյի մեկ յերկիրը, «հին յերկիրը», ինչպես ամերիկացիները սիրում էյին կոչել ծննդավայրը: Շուշուփելի կերպով տեսնում էյի մտրս և փոքրիկ քույրերիս, փորոնք քնում էյին տաք անկողիններում, մինչև անգամ յերազում էյի նրանց յերազը, տեսնում էյի, փոր նրանք ինձ էյին տեսնում իրենց անշարժար յերազում, փոր յես գտնվում եմ ճորս ապարանքում, հրձվում եմ, յերգում ու պարում մոտանալով իրենց: Տեսնում էյի, փոր քույրերս առավոտյան դարթնում են մտրս բարձրաձայն աղոթքից, փազում, գնում են նրա անկողինը, մի ժամ էյ ախտեղ չաղակրատելու, համառոտ քնին բարությամբ ճանապարհ դնելու, յերազում էյի մանավանդ, փոր հաստ, կարմիր թշերով ազախինը կովը կըթեց, կաթը բերեց, գրեց սջախի վրա, յեփ յեկավ, սերը հավաքեց յերեկվա սերի վրա, փորպեղի ալիլի ու ալիլի թանձրանա: Տեսնում էյի, ինչպես քույրերս խմում են, մինչդեռ մի քիչ հետո մայրս նրանց կեստրվա ուտելիքի ծրարն է պատրաստում և գրքերը գնում պայտասակների մեջ, փոր գպրոց փազեն:

Հետոն, բարձր յերկնքի հեռավոր խորշում բյուրավոր լույսեր են բացվում, էլի փակվում և էլի բացվում, յերևում են մեֆիստոֆելյան Փիգուրաներ, փոր պարում են, ցատկում, անմարդկային շարժումներ գործում, յերկար, բարակ սրունքներ, յետանկյունաձև իրաններ և գլուխներ, ապա շարվում են իրար մոտ, կարգապահ գորքի նման, քայլում են և կորսվում մթթում. էլի բյուրավոր լույսեր, այս անգամ գրեք են. կարգում եմ՝ «ծախն», «ծախն», «ծախն». աչքս դարձնում եմ յերկնքի մի ուրիշ խորշը, հանկարծ մշուշի կապույտ ծովում, լուսով ստեղծված հազարավոր ծիծաղելի, Փարսային Փիգուրաներ են գծազրվում. մի խումբ ծխախոտ և հանձնարարում, մի ուրիշը՝ բիսկվիտ, յերրորդը՝ կալրաս, յորրորդը, հինգերորդը և հարյուր յերրորդը հարյուրավոր վաճառելիք նյութեր, փորոնց տերերը յարել են նրբանց, գնացել քնել են կամ հրձվում են նյու Յորկի հազարավոր լուսավոր գահճիճներում:

Տանջում են ինձ այս բյուրավոր լույսերը, այս հարյուրավոր Փիգուրաները, փորոնք փորոշ ժամանակից հետո միևնույն շարժումներն են անում. ուզում եմ չզխել, փախչել, բայց ո՞ւր եմ փախչելու, ուզում եմ փակել աչքերս, բայց ապախորթյունն է ինձ տանջում, ամեն տեղ կան, ամեն բայ յափոխումին, յերկնքի և գեանի բոլոր, բոլոր կետերում:

Արգեն լույս և նյու Յորկն ազմկում է, անասելի ազմուկ, խոր, տարածուն, ընդգրկող: Ամեն մարդ քայլում է լուս, կարգապահ, արագ, գգույշ, բայց վտախ ձայներից, կառքերից, ախտոմբիլներից, ապրանքատարներից, արամփայներից, նավերից, ովկիանից, ոգից, քարերից, յերկնակարկառ շենքերի պատուհաններից, հազարավոր ժամացույցներից, բացփող-փակվող գոնիներից, մեքենաներից, շշակներից, ծխից, մրից, դեղից, պարանգներից մզվում և մի ազմուկ, ինչպես ձայն-մշուշ, տարածվում է, բարձրանում, աճում, ուռձանում, հցորանում, հցորանում, գտնում և անհաղթելի, տեսական ու արիական:

Ակալում է իմ ցերեկվան «աշխատանքը»՝ մանեյ ամեն մի խանութ ու աշխատանք մուրալ:

—Ի՞նչ մասնագիտություն ունեք, պարո՛ն:
—Մասնագիտություն չունեմ, պարոն, նոր եմ սովորելու, պետք է մտնեմ գրամատիկական ակադեմիա:
—Գրամատիկական ակադեմիա՞, հա՛ հա՛ հա՛...:

Ակալում է զանտեղան հերոսների մի քրքիջ, ծաղրի զգեստող մի հրճուց-փախչում եմ դուրս, փորոշում եմ ասել՝ արեելյան գորգեր նորոգող եմ, բայց յես չեմ ուզում մտնել էլի նույն այն դարձելի գործի մեջ, մտնում եմ հարյուրավոր խանութներ, —ապարդյուն, ապարդյուն: Մի ճաշարանում խոտանում են կշապցնել ինձ, յեթե արագ մաքրեմ մի քանի տասնյակ ամաններ. մաքրում եմ և ուտում...:

Ելի դիշեր, յերրորդ դիշեր: Քունն ու ցուրտը կալում են իրար դեմ. անողորմ կոխվ՝ մի՛չ մի կողմից մի՛չ մի գիջում. յես հանգիստանում եմ նրանց համար սաղմի մի փողորմելի դաշա, —անադորոյն կոխվ յերկու համահավասար հցորների միջև, —ազիտորում մի դաշտում:

Չայրույթը աճում է իմ մեջ նման սվիկանի կատաղած ալիքներին, աճում է իմ մեջ ցատումի մի հրգեհ սոցիալական այս նատիրում, ալիքովում և հրգեհը՝ համեկու մինչև դենիթը՝ ուր ցուլերն ու տիմարները վայելում են, չուսյրում, անադորոյն մաշում, փճացնում: Ուզում եմ նետվել մի ափտոմորիլի վրա, բացատրություն, արդարություն պահանջել, բայց իմ հոգին ծիծաղում է իմ վրա, ծաղրում է իմ բարկությունը, ընկնում են իմ թեկերը ինչպես գնդակահարված մի գլուխ, ջախջախվում և արդարություն իմ գղացումները ինչպես փշուր-փշուր յեղած լուսամուտի ապակին: Հանդիպում եմ գլուխները կախ, հյուսիսային գիշերների նման մուսյր-մարդկանց, փորոնց աչքերից կարգում եմ նրանց պատմությունը ինչպես բացված և առաջս դրված մի գիրք: Ուզում եմ մոտենալ, անցնում են նրանք: Չգում եմ, փոր նրանք ասում են:

—Գու էլ մի քիչ պետք է յերգես, բոգսքես, ապա անգորությունից գիմեսս զգվելի յիրիկային և յերբեք չուզենաս բուռնցք սեղմել, բարձրացնել և հարվածել:

—Իրավունք ունեն, մտածում եմ, սոցիալական նատիրի վիթխարի բուտակը քայլում է լուս, մուսյլ ապրելով ներքին անհատական, գմայլելի մի երտտիկա. այդ բանակը քայլում է միթին խորխորատներից, քայլում է արհամարելով:

—Բայց միթե՞ լապտերներ չկան անդունդներում, միթե՞ այդ մեծ գիշերում չեն սահում լույսեր, հարցնում եմ ինքս ինձ:

—Վո՛չ մի գիշեր անվախձան չե, յեզրակացնում եմ, կը պայթեն լույսերը, այս միևնույն խորխորատում կթափալվի արեղակը, փոսկի կը ծեփի սոցիալական նատիրի թաց, լլղրծուն պատերը:

Քայլում եմ, քայլում եմ անորոշ և տարտամ:
Հանդիպում եմ «գիշերողներից» մեկին, ծանոթանում ենք. նա արդեն

գիշերելու ստաժ ունեցող մարդ է, գիտե՞ս գիշերները պատասխարկելու բոլոր հնարքները, բայց ինչո՞ւ չես դուրս մնացել: Վերոյհետև ամեն ինչ փորձել է և մաշվել են մինչև անգամ հնարքները, բոլորն էլ հասել են իրենց փողոմների վախճանին:

—Հինգ սենթով կարելի չե՞ս ամբողջ գիշերը հրաշալի պանդոկ ունենալ, ասում է իմ բաղդակիցը:

—Ինչպե՞ս, ցույց ավելք ինձ այդ պանդոկը, աղադակեցի ու բոնեցի նրա ոճիքից, վոր հանկարծ չձաղրի ու հեռանա:

—Հինգ սենթ ունե՞ք, հարցրեց:

—Այո, միայն հինգ սենթ ունեմ, պատասխանեցի:

—Ի՞նչ հարուստ եք, իմ տղա, հինգ սենթով փառավոր կարող եք քնել, հավաստիացրեց ինձ «գիշերողը»:

—Շո՞ւա, ցույց ավելք ինձ պանդոկը:

—Յեկե՛ք, ասաց «գիշերողը»:

Յես հետևեցի: Նա տարավ ինձ ստորյերկրյա տրամվայի մի կայան ու ասաց.

—Քնեցե՛ք մի տոմս, մտե՛ք կառախղմբը, յերկու անգամ ծայրից ծայր գնացե՛ք ու յեկե՛ք՝ կը լուսանա, այնտեղ տաք է, կարող եք կարդալ, քնել, դարձնել, ծանոթանալ մարդկանց հետ, վոր վոք իրավունք չունի ձեզ դուրս բերելու վազոնից:

—Ի՞նչ լավ կլիներ տասը սենթ ունենալի և միասին «գիշերելինք», ասացի բարեկամիս:

—Ձեր ունեցածը հինգ սենթ է, ավելորդ մի փիլիսոփայեք, իմ բաղդավոր բարեկամ, մտե՛ք ներս ու քնեք, ասաց նա ու հեռացավ:

Անկեղծ էլի ասում, բայց իսկապես ավելորդ էր ասելս: Մտա ներս: Վազոնը մանելիս ժամը տասներկուսն էր, բազմություն կար. բայց մի քանի կայարանից հետո վազոնը թեթևացավ, նստեցի մի խորունկ թաղվող նստարանում և քնեցի: Քունս անհանդիսա էր, մղձավանջներով ու զարհուրելի անկումներով լեցուն. մի քանի անգամ զարթնեցի, մոտանալով, թե ուր եմ քրնել. հիշեցի ու ելի քնեցի: Յերը վերջնական զարթնեցի՝ առավոտյան ժամի շորսն էր, կառախղմբը հետ եր վերադարձել, և վոր վոք ինձ չեր խանգարել: Վազոնում ութը-տասը հողի կային, վորոնք ինձ նման «գիշերողներ» էլին, բնորակա՞ն կամ պանիայի շուրջը վիճաբանում էլին. բոլորն էլ արտահայտվում էլին Յեվզենի Իերզի ոգային. Իերզի անուշով պարզվեց, վոր նրանք սոցիալիստներ էլին: Նրանց միջից մեկը մոտեցավ ինձ ու չգիտեմ ինչու՝ աղաղակով հարցրեց: Ասացի. պարզվեց, վոր նա յեղ հույն էր, յերկար «գիշերող»-ներից, վորն առաջին անգամ ինձ պատմեց սոցիալիզմի, շորրորդ դասակարգի մասին: Յերը կայարանից դուրս էլինք գալիս, հույնը ինձ ասաց.

—Մենք ելի այստեղ կը հանդիպենք, և ծիծաղեց:

Հասնում է նորից գիշեր: Չորրորդ գիշեր: Հագում եմ, անվերջ տաք ճաշարաններ մտնելով ու դուրս գալով ցուրտ անգութ ողին. մրսել եմ: Ձեմ զարմանում: Կես գիշերին կանգնած եմ մի ծառի տակ, հագում եմ, չեմ նշուրում, վոր վոստիկանը մոտենում է ինձ:

—Հիվանդ եք, պարո՞ն:

—Հագում եմ, պատասխանում եմ:

—Ինչո՞ւ տուն չեք գնում, հարցնում է բարձրահասակ իրլանդացին:

—Տո՞ւն: Ծիծաղում եմ: Տուն չունեմ:

—Յեկե՛ք ինձ հետ, աղադարում է իրլանդացին:

Գնում եմ, մտածելով, վոր վոստիկանատուն է տանելու: Լավ է: Այնտեղ տաք է, տախտակները վրա մինչև առավոտ կը քնեմ:

—Այնտեղ ավելի կը զայրանամ, կը հասնեմ բարեկեթյան դապաթնակետին, մտածում եմ, ինչ ուզում է լինի, վորինչ, բացարձակապես վորինչ չունեմ կորցնելու, կը կորցնեմ միայն գիշերները փախուցելու «իրավունքը»:

—Յերկա՞ր ժամանակ է տուն չունեք, հարցնում է վոստիկանը:

—Վո՞չ, նոր եմ յեկել Նյու Յորկ, բայց ինչպես յերեում է յերկար կը տևի:

—Ինչո՞ւ:

—Գործ չկա, պատասխանում եմ:

Վոստիկանը անիմաստ ծիծաղում է:

Ա՛յս, այդ ծիծաղը, այնքան անպատճառաբանված էր:

Ինչո՞ւ յեր ծիծաղում, մինչև հիմա յեղ չեմ հասկացել: Յերևի հիմար էր: Միթե՞ հիմարությունը պատճառաբանված չի լինում:

Կանգ ենք առնում մի շենքի առաջ, մտնում ենք ներս, մաքրամաքուր մի շենք, մտնում ենք դրասենյակ, դրասենյակում արձանագրում են իմ անունը, և տալիս են փոքրիկ անկետա՝ լցնելու. լցնեմ եմ վոտանգավոր անկեղծությամբ: Վոստիկանը բարև գիշեր և ասում, նայում է ինձ բարությամբ, ժպտում ու հեռանում: Գրասենյակի վարիչը ելքաբաղան կոճակը սեղմում է, գալիս է մեկը, վորը գիշերային տարագից կարելի յեր միայն բազնիսի ծառայող կարծել:

—Ֆարե՛ք պարոնին, ասում է դրասենյակի վարիչը:

—Հաճեցե՛ք, ասում է ինձ յերկրորդը:

Յես հետևում եմ: Ո՞ւր եմ գնում, չգիտեմ, չենք տաք է, դա յե ինձ հանգստացնողը, թող բանտարկեն, վորինչ:

Մտնում ենք մի ընդհանուր սրահ, վորի բոլոր պատերը լցված են փոքրիկ, փոքրիկ յերկաթե պահարաններով: Դիտում եմ քննական հայացքով, ուզում եմ իմանալ թե ո՞ւր եմ, ինչո՞ւ բերին ինձ այստեղ, բայց անողորմ, վորինչ չեմ հասկանում:

—Հանեցե՛ք ձեր շորերը, ասում է «բազնիսի ծառայողը»:

Հանվում եմ ու բոլորովին մերկ կանգնում. «բազնիսի ծառայող»-ը մի պահարանի փոքրիկ բանալի յե տալիս, վորպեսզի շորերս գնեմ այդ պահարանի մեջ ու փակեմ: Շորերս գնում եմ պահարանում, կողպում և բանալու հետ միացած բետոնե պարանից անց կացնում թեխ: Նա ինձ առաջնորդում է մի դուռ, բաց եմ անում դուռը, մտնում եմ ներս, բացված տեղը կորրիդոր է, խորքում մի փոքրիկ սենյակ առանց դուռի, մի սեամորթ ախա լցնելու չափ կակուզ սապոն և տալիս ու մի շուշանի պես սպիտակ ցամքոց, շարու-

գիշերելու ստափ ունեցող մարդ է, գիտե՞ս գիշերները պատասպարվելու բոլոր հնաբքները, բայց ինչո՞ւ յե դուրս մնացել: Վորովհետև ամեն ինչ փորձել է և մաշվել են մինչև անգամ հնաբքները, բոլորն էլ հասել են իրենց վողորմելի վախճանին:

— Հինգ սենթով կարելի չէ ամբողջ գիշերը հրաշալի պանդուկ ունենալ, ասում է իմ բաղդակիցը:

— Ինչպե՞ս, ցույց ավելք ինձ այդ պանդուկը, աղաղակեցի ու բռնեցի նրա ուժիքից, վոր հանկարծ չձաղրի ու հեռանա:

— Հինգ սենթ ունե՞ք, հարցրեց:

— Այո, միայն հինգ սենթ ունեմ, պատասխանեցի:

— Ի՞նչ հարուստ եք, իմ տղա, հինգ սենթով փառավոր կարող եք քնել, հավաստիացրեց ինձ «գիշերողը»:

— Ե՞ս, ցույց ավելք ինձ պանդուկը:

— Յեկե՛ք, ասաց «գիշերողը»:

Յես հետևեցի: Նա տարավ ինձ ստորյերկրյա տրամվայի մի կայան ու ասաց.

— Գնեցե՛ք մի տոմս, մտե՛ք կառախումբը, յերկու անգամ ծայրից ծայր գնացե՛ք ու յեկե՛ք՝ կը լուսանա, այնտեղ տաք է, կարող եք կարգալ, քնել, զարթնել, ծանոթանալ մարդկանց հետ, վոչ վոք իրավունք չունի ձեզ դուրս բերելու վազոնից:

— Ի՞նչ լավ կլինե՞ր տասը սենթ ունենալի և միայն «գիշերելիք», ասացի բարեկամին:

— Ձեր ունեցածը հինգ սենթ է, ավելորդ մի փիլիսոփայեք, իմ բաղդավոր բարեկամ, մտե՛ք ներս ու քնեք, ասաց նա ու հեռացավ:

Անկեղծ էլի ասում, բայց իսկապես ավելորդ եր ասելու: Մտա ներս: Վազոնը մտնելիս ժամը տասներկուսն էր, բազմութուն կար. բայց մի քանի կայարանից հետո վազոնը թեթևացավ, նստեցի մի խորունկ թաղվող նստարանում և քնեցի: Քունս անհանգիստ էր, մղձավանջներով ու զարհուրելի անկումներով լեցուն. մի քանի անգամ զարթնեցի, մոռանալով, թե ուր եմ քրնել. հիշեցի ու ելի քնեցի: Յերբ վերջնական զարթնեցի՝ առավոտյան ժամի չորսն էր, կառախումբը հետ եր վերադարձել, և վոչ վոք ինձ չէր խանդարել: Վազոնում ութը-տասը հոգի կային, վորոնք ինձ նման «գիշերողներ» էլին, բնորական կամ պանդուկ չուրջը վիճարանում էլին. բոլորն էլ արտահայտվում էլին Յեվգենի Գերգի ոգային. Գերգի անունով պարզվեց, վոր նրանք սոցիալիստներ էլին: Նրանց միջից մեկը մտանցավ ինձ ու չգիտեմ ինչու՝ աղաթյուն հարցրեց: Ասացի. պարզվեց, վոր նա յել հույն էր, յերկար «գիշերող»-ներից, վորն առաջին անգամ ինձ պատմեց սոցիալիզմի, չորրորդ գտահարգի մասին: Յերբ կայարանից դուրս էլինք գալիս, հույնը ինձ ասաց.

— Մենք ելի այստեղ կը հանդիպենք, և ծիծաղեց:

Հասնում է նորից գիշեր: Չորրորդ գիշեր: Հագում եմ, անվերջ տաք ճաշարաններ մտնելով ու դուրս գալով ցուրտ անգուլթ ուղին. մրսել եմ: Չեմ գարժանում: Կես գիշերին կանգնած եմ մի ծառի տակ, հագում եմ, չեմ նշմարում, վոր վոստիկանը մոտենում է ինձ:

— Հիվանդ եք, պարո՞ն:

— Հագում եմ, պատասխանում եմ:

— Ինչո՞ւ տուն չեք գնում, հարցնում է բարձրահասակ իրանդացին:

— Տո՞ւն: Ծիծաղում եմ: Տուն չունեմ:

— Յեկե՛ք ինձ հետ, աղաբարում է իրանդացին:

Գնում եմ, մտածելով, վոր վոստիկանատուն է տանելու: Լավ է: Այնտեղ տաք է, տախտակների վրա մինչև առավոտ կը քնեմ:

— Այնտեղ ավելի կը զայրանամ, կը հասնեմ բարկության գաղաթնակետին, մտածում եմ, ինչ ուզում է լինի, վոչինչ, բացարձակապես վոչինչ չունեմ կորցնելու, կը կորցնեմ միայն գիշերները թափառելու «իրավունքը»:

— Յերկա՞ր ժամանակ է տուն չունեք, հարցնում է վոստիկանը:

— Վո՞չ, նոր եմ յեկել Նյու Յորկ, բայց ինչպես յերևում է յերկար կը տևի:

— Ինչո՞ւ:

— Գործ չկա, պատասխանում եմ:

Վոստիկանը անխմատ ծիծաղում է:

Ա՛խ, այդ ծիծաղը, այնքան անպատճառաբանված եր:

Ինչո՞ւ յեր ծիծաղում, մինչև հիմա յել չեմ հասկացել: Յերեի հիմար եր: Միթե՞ հիմարությունը պատճառաբանված չի լինում:

Կանգ ենք առնում մի շենքի առաջ, մտնում ենք ներս, մաքրամաքուր մի շենք, մտնում ենք գրասենյակ, գրասենյակում արձանագրում են իմ անունը, և տալիս են փոքրիկ անկետա՝ լցնելու. լցնում եմ վոստիկանը անկեղծությամբ: Վոստիկանը բարի գիշեր է ասում, նայում է ինձ. բարությամբ, ժպտում ու հեռանում: Գրասենյակի վարիչը ելեքտրական կոճակը սեղմում է, գալիս է մեկը, վորի գիշերային տարազից կարելի յեր միայն բաղնիսի ծառայող կարծել:

— Տարե՛ք պարոնին, ասում է գրասենյակի վարիչը:

— Հաճեցե՛ք, ասում է ինձ յերկրորդը:

Յես հետևում եմ: Ո՞ւր եմ գնում, չգիտեմ, շենքը տաք է, դա յե ինձ հանգստացնողը, թող բանտարկեն, վոչինչ:

Մտնում ենք մի ընդհանուր սրահ, վորի բոլոր պատերը լցված են վազրիկ, փոքրիկ յերկաթե պահարաններով: Դիտում եմ քննական հայացքով, ուզում եմ իմանալ թե ո՞ւր եմ, ինչո՞ւ բերին ինձ այստեղ, բայց անողուտ, վոչինչ չեմ հասկանում:

— Հանեցե՛ք ձեր չորերը, ասում է «բաղնիսի ծառայողը»:

Հանվում եմ ու բոլորովին մերկ կանգնում. «բաղնիսի ծառայող»-ը մի պահարանի փոքրիկ բանալի յե տալիս, վորպեսզի չորերս գնեմ այդ պահարանի մեջ ու փակեմ: Երբեքս գնում եմ պահարանում, կողպում և բանալու հետ միացած բեռնի պարանից անց կացնում թեխ: Նա ինձ առաջնորդում է մի դուռ, բաց եմ անում դուռը, մտնում եմ ներս, բացված տեղը կորրիգոր է, խորքում մի փոքրիկ սենյակ առանց դուռի, մի սեամորթ ափս լցնելու չափ կակուղ սապոն և տալիս ու մի շուշանի պես սպիտակ ցամբոց, շարու-

նակում եմ ճանապարհը, մտնում եմ մի ընդարձակ բազնիս, հարյուրավոր
դուշեր, բայց վոչ մի լողացող չկա, արդեն ուշ է: Ինչո՞ւ չեմ լողանում,
չգիտեմ, բայց լողանում եմ ազահարար, մարմինս տաքանում է, տաքու-
թյան մի անասելի հեշտանք եմ զգում, ջուրը վազում է, վազում է անվերջ,
ստաա, ինչպես ավազը արարական յերկրներում, թափվում է տաք, հեշտա-
դրգիս ջուրը, կատաղած անձրևի նման, մարմինս, ցրտացած, փայտացած
մարմինս տաքանում է, այնպես դյուրեկանություն եմ զգում, ինչպես կզգայի
իմ սեփական մոր գրկում: Յես կը ցանկանայի մնալ այդ տաք շատրվանի
տակ, յեթև բունս ինձ չբռնադատեր վերջացնել: Վերջացրի, փաթաթվեցի
սեամորթի տված սպիտակ մեծ ցամքոցի մեջ: Կյանքում ինձ վոչ մի ծաղկի
հաս այնքան չեր հարբեցրել, վորքան բուբումը այդ նոր արթուկված,
մաքուր սպիտակեղենի: Եարունակեցի ճանապարհս, բացի ստաա յեկամ
դուռը, էլի կորրիդոր, դուռը բանալիս, դանդի մեզմ հնչյուն յավեց, անմի-
ջապես կորրիդորի մի դուռը բացվեց և այս անգամ մի սեամորթուհի կանգ-
նեց դեմս, «Տեսե՛ք ինձ» ասաց սեամորթուհին: Հեռեցի: Մտանք մի
սրահ. մեզմ տաքություն, կիսալույս. աչքս պտտցրի շորս կոզմս, հար-
յուրավոր մարդիկ քնում էլին, վոմանք խորդում, ծանր շնչում, շատերը
կարծես չեյին ել շնչում, բնկզմվել էլին ո՞վ դիտե ի՞նչ աշխարհում: Բոլորն
ել մրսածներ ու հոգնածներ էլին, փախել էլին փողոցի անգթությունից:
Սեամորթ կինը, վորի աչքերը վայրում էլին անդունդն ընկած աստղերի
նման, ստաա խոնաված ցամքոցը վրայիցս և նորը տվեց, նոր-նոր բանալով
ծալրերը, էլի փաթաթվեցի շոր, տաք ու մաքուր սպիտակեղենի մեջ, և
մտա անկողին: Անկողին մտնելուց հետո՝ կարծեցի, վոր տուն վերադարձա
և մտա մեր տան լվացքի սրը փոխված իմ մանկության սպիտակ, սպիտակ
անկողինը:

- Վորե՛կ բանի կարիք չունե՛ք, հարցրեց սեամորթուհին հեռանա-
լուց տաաջ: Գ.
- Ի՞նչ բանի, հարցրի, կարծելով վոր այնքան յավությունից հետո
ուզում է ինձ հեղնել:
- Ջուր, սրինակի համար, լողանալուց հետո ամեն մարդ ջուր է խը-
մում, պատասխանեց սեամորթը սպիտակ բարությամբ:
- Վո՞չ, ասացի, ջուր չեմ ուզում: Եսա ծարավ էլի, բայց ավելի ու-
զում էլի ծխել քան խմել:
- Կարելի՞ չե ծխել, հարցրեցի:
- Այո՛, կարելի չե, բայց վոչ այտուց, այ այն սենյակը, այնտեղ
ցուրտ չե, չեք մրսի, մի փախնաք:
- Միակու հարավորությունն ապահովելուց հետո՝
- Ուրեմն մի բաժակ ջուր ավեք, խնդրեմ:
- Մոտ եր ջրի տեղը, մի բաժակ ջուր տվեց սեամորթ կինը. մեջը սա-
ռույցի փոքրիկ մի կտոր եր լողում: Խմեցի այս սառույցի կտորն ամբողջ
մարմինս հովացրեց:
- Գիշեր բարի, ասաց սեամորթ կինը, աչքերը փայլակեց, մի փոք-

րիկ շարժումով սե զնդիկները կորովեցին, ճյուղի պես սպիտակեց աչքի
խոռոչը և հեռացավ: Յես միտս դրի վեր կենալ, դնալ ծխելու սենյակը,
մի գլանակ քաշել, քաշել մինչև վոսկորներին ծուծը և վերադառնալ,
բայց վոչ՝ դնացի և վո՞չ ել իմացա թե ինչպե՛ս քնեցի, միայն ստավոտ-
յան յերբ աչքերս բացի՝ հիշեցի, վոր այն գիրքումն էլի՝ յերբ միտք էլի
անում գնալ և ծխել:

Գիշերը յերազեցի: Խոսնիխունն վոչինչ չկար այդ յերազում. պայ-
ծառ, վճիտ, ուրախ մի յերազ. պարում էլի ջահագարդ մի դահլիճում,
պարում էլի զավառացի իմ մոր հետ: Մայրս յեկել եր Ամերիկա, ստանց
իր զավառական շորերը փոխելու, նա հագել եր արյան գույն մետաքս,
սրմայով բանված վրան, ճակատին վոսկի շարած, մի խոշոր աղամանը
խրած սե մագերի մեջ, վորը փայլում եր ինչպես մեկ հատիկ կրակը
չվառված ամուխի դեղում: Համբուրում եր ինձ մայրս, համբուրում եր
այնպիսի հրճվանքով և կրքով, կարծես յերիտասարդ հայրս լինելի նոր
հանդիպած իրան, պարում եր նա, զավառացի այդ միամիտ, ազոթոզ
կինը մի վայրս, փոթորկալի, ցանկահարույց, կայթում էլին նրա վտան-
քը, ինչպես վտանքը սլափնական պարուհուն: Ազոթքներից, հայկական
յեկեղեցու մթնշաղից, ինկից ու մոմից հեռու, նա գրկել եր իմ հոգին վոր-
պես սիմփոն ուրախության, յերիտասարդ աշխարհի: Ապա նա ուզեց պարել
ստանձին. սուրբ գրքի և ճաշու ավետարանի ընթերցող մայրս սկսեց պա-
րել մեկն այն Փանտաստիկական պարերից, սճապուլյա, մրբկալից նա-
զանքների խոյական, ամենի մի պար, վորի նմանը չի պարել վո՞չ մի սպա-
նուհի բոլոր փամանակներում և վո՞չ մի արար կամ հնդիկ ազլեի խորա-
խորհուրդ այդ յերկրների նախադարյան պատմությունից մինչև հիմա:

Մայրս շարունակում եր իր ամենի, վայրենատենչ պարը, յերբ հան-
կարձ իմ ամբողջ հոգին լցվեց արցունքով, վազեցի, գրկեցի նրան, գլուխս
թաղեցի սրմայով բանված արյան գույն մետաքսե հին, անտիկական շո-
րերի ծալքերում և լցրի նրա կուրծքն իմ յերիտասարդ ուրախության ար-
ցունքներով: Մեր շուրջն ամերիկացիներ էլին, Փրակներ հազած մարդիկ
անգլերեն լեզվի հատուկ մյավյուններով և բացականչություններով. կա-
նայք վոսկրոտ էլին, յերկար, նիհար, մեզվիրան, ստամները ցցած ան-
հրապույր և անհրավեր գեկոլաեններով, ապչած ու հիմարացած՝ դիտում
էլին իմ մորը, գիտում էլին արևելյան այդ խոյությունը, վոր արժեր
դեզերն ամերիկյան բոլոր վոսկիների, դեզերը կաթոլիկ յեկեղեցու արևել-
քից գողացված գոհարների, աստղանման բոլոր քարերի:

Առավոտյան յերբ աչքերս բաց արի, մի անգամ ել խորը շնչեցի բու-
րումը սպիտակ անկողնի, բարի, հուրընկալ անկողնի: Յատկեցի անկոզ-
նից մյուսների հետ, ուրախ, զվարթ, գաղջ մթնոլորտը ապլիս եր ինձ
ճկունություն և վոստում: Գնացինք պահարանների սրահը, հագնվեցինք:
Մեզանից 50 հոգու անունները կարդացին, մենք մնացինք այնտեղ,
մյուս գիշերողները վազեցին դուրս: Սարսափելի դեմքեր կային գիշերող-
ների մեջ, վորոնք հայտնարեցին, յերբ հագան իրենց ստորյա շորերը.

արտահայտութիւններ, վարոնք չեկին նշմարվում գիշերը, կիսալուսի տակ, քնի մեջ, սպիտակ և խաղաղ անկողիններում: Մնացող 50 հոգու յուրաքանչյուրին մի մի աշխատանք տվին անելու. ինձ հանձնարարվեց շենքի 25 լուսամուտների ապակիները մաքրել: Ուրախությամբ և վարձահատույց լինելու բավականությամբ մաքրեցի ապակիները և իջա գրասենյակ, շնորհակալութիւն հայտնեցի գրասենյակի վարիչին, վորը նույն անձնավորութիւնը չեք, վորին յես գիշերը հանդիպեցի: Վարիչը դարձացավ, վոր շնորհակալութիւն եմ հայտնում: Բոլորն էլ դուրս եկին յեկել ատանց շնորհակալութիւն հայտնելու: ց

— Ինչո՞ւ եք Նյու Յորկ յեկել, հարցրեց վարիչը:

Մի պահ մտածեցի ճիշտը չասել, վորպեսզի գաժանորեն չծիծաղի, բայց յերբ նորից նայեցի վարիչի բարի (կարծես ոտարական լիներ) դեմքին՝ ասեցի.

— Նյու Յորկ եմ յեկել դրամատիկական ակադեմիա մտնելու:

Վարիչը նայեց աչքերին մեջ, նայեց այնպես սուր, վոր կարծեցի թե աչքերիցս ներս և մտնում և ձեռս բռնելով ուժգին սեղմեց:

— Ամեն յերեկս յեկեք մեզ մոտ մինչև դորձ գտնեք և դպրոց ընդունվեք, ասաց:

Յես նրա խոսքի անկեղծութիւն խորասկս հավատացի, վոր մի դանդաղական քրքիջ, վոր մի դիվային հրհոց: Բարի յեր նա: Յես նրա դեմքի վոչ մի մանրամասնութիւնը չեմ մոտացել մինչև հիմա:

Յելա փողոց, անկյունը դառնալիս յես նայեցի տեսնելու թե ինչ շենք էր ուր գիշերել էյի. կարգացի—«Գիշերելու տուն»: Առաջին անգամն էր, վոր այդպիսի շենքի գոյութիւն մասին գաղափար էյի կազմում:

Իեռ անկյունը չեյի դարձել, յերբ մի յերիտասարդ, միջակ հազնված, խոժոռ, իմաստուն աչքերով, մոտեցավ ինձ և բարեկց: Չարմացա:

— Յես ձեզ ճանաչում եմ, սկսեց յերիտասարդը, դրա համար բարեկցի ձեզ:

— Ձեզ չեմ հիշում, պատասխանեցի, ո՞ւր ենք պատահել իրար:

— Հենց այստեղ, հիմա, յես ձեզ ճանաչում եմ, դուք անդորձ եք, նոր եք յեկել Նյու Յորկ, թափառելիս եք յեկել գիշերները, քաղցած և ատանց բարեկամի:

— Դուք կարդացել եք իմ անկետան, գոչեցի, անպայման կարդացել եք:

— Վո՞չ մի անկետա չեմ կարդացել, այստեղ գիշերողները նրանք են, վորոնք անգորձ են, անտուն և քաղցած: Այդպիսիների համար և, վոր բուրժուազիան ստեղծել և այդ տունը, այդ սրիկաների փողովն և, վոր հիմնվել և և կառավարվում և այդ տունը:

— Ինչո՞ւ սրիկաներ, չե՞ վոր լավ բան և, յերբ անգործները դուրսը չեն մնում այս ցրտին:

— Այո՞, լավ բան չե, այդ աները, նրանց վարիչներ լավ վերաբերմունքը մեզմում են անգործների բարկութիւնը, կոտորում են նրանց բնութայն, ընդվզում թափը, համոզված հարեց յերիտասարդը: 10

— ձիշտ եք, յերեկ շատ էյի բարկացել, բայց այսօր վոչ մի բարկութիւն չունեմ:

— Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք, այդպես են մեզ խարում, այդպես են մեզ թուլացնում: Յես չեմ ատում, վոր էլ մի մտնեք այդտեղ, քանի անգորձ եք՝ ողովեցե՛ք այդ հարձարութիւնից, բայց մի մոտանաք թե ինչու յես ստեղծված այդ դեղեցիկ և կեղծավոր տունը: Դա սպիտակ և, դա ավելի վատ տեսակի սպիտակ և քան յեկեղեցին, կրոնը:

Ել չպատասխանեցի, համոզվեցի յես այդ յերիտասարդին: Քանի խոսում էր, նրա աչքերը բոցավառվում էյին, հոնքերը կիտում էր:

— Ներսը էլ գիշերոյ մնա՞ց, հարցրեց նա:

— Վո՞չ, յես վերջինն եմ, պատասխանեցի:

— Մնաք. բարով, բարեկամ, ասաց յերիտասարդը, սեղմեց ձեռքս և արագ քայլերով հեռացավ:

Նա մտնում իրտակա կանգնած էր այնտեղ, վորպեսզի բոլոր գիշերողներին իրազեկ դարձնի բուրժուական կեղծ համբույրի ձեւերին:

Հանրային սրբոցիցի անցնելիս՝ լքված մի լրագիր վերցրի նոտարանի վրայից և սկսեցի կարգալ «ուզվում ե» բաժինը, վոր մեկը հուսալից չեք, հանկարձ աչքին հանդիպեց մի մեծատառ «ուզվում ե»: X յեկեղեցին ուզում էր ամեն տեսակ ցածր մասնագետներ՝ տեղափոխելու համար նրանց: Վազեցի X յեկեղեցին. բավական բազմութիւն կար: Սպասեցի մինչև հերթս հասալ և մոտ ներս: Դա մի մեծ սրահ էր, ուր նստած էյին 7-8 բողոքական քարոզիչներ, առանձին սեղաններով և իրարից բավականին հեռու: 3-րդ սեղանն ազատ էր. մոտեցա և բարեկցի: Սա մի սափրված մարդ էր, շատ մաքուր ոճիւրով և շապիկով, լայն թևոցներով: Նա դրողված էր սեղանի վրա դրված իրերը, վորոնք շատ սիմետրիկ դարձված էյին, ավելի և ավելի սիստեմատիկ դարձելով: Բարես քաղաքավարությամբ ընդունեց և քարկեց ինձ զրավել իր սեղանի կողքին դրված աթոռը: Նստեցա:

— Ի՞նչ մասնագիտութիւն ունեք, հարցրեց:

Նորից այդ չար, դաժան հարցումը, մտածեցի և վարկենապես վորոշեցի ճիշտ ասել.

— Հին, ծակած, այլված արեւելյան գորգեր նորոգող եմ, պատասխանեցի:

— Ո՞չ, մլավեց քարոզիչը և հարեց, — մի քիչ սպասեցեք, գիմացի սեղանը յերբ գատարկվի՞ նրա մոտ գնացեք: 11

Մեքենայորեն դարձա այդ սեղանը: Այնտեղ մի քարոզիչ էր նստել, սե աչքերով, սե մազերով, մորթր թուխ, վորի վեմքի խոր դժերը տանջանք էյին արտահայտում: Քիչ անց սեղանը դատարկվեց:

— Համեցե՛ք այն սեղանը, ասաց պատվելին:

Գնացի, բարեկելիս նրան ձեռք ավի, նրա ձեռքը կոպիտ էր, անառչ, տառապանքի հետքեր կային մինչև անգամ նրա ձեռների վրա: Առանց հարցման սպասելու՝ հարեցի.

— Արեւելյան գորգ նորոգելու մասնագիտութիւն ունեմ:

— Լավ, շատ լավ, պատասխանեց և հարցրեց.

— Հայ եր :

— Այո :

Յերբ հայ լինելու իմացով, սկսեց հայերեն խոսել :

— Յես քեզ լավ գործ կը ճարեմ, ասաց, դու լավ մանչ ես, բայց մի քանի թեթև պայմաններ կան, վորոնց պետք է հնազանդվես :

— Նախ և առաջ պետք է աստուծո հաճատաս, աղա՛ս, աստուծո հաճա-
տարուց հետո ել, մեր յեկեղեցու անդամ պետք է գրվես, թեթև բաներ են,
յես քեզ շատ աղեկ գործ կը ճարեմ :

— Սակարկությունն էք անում, ի՞նչ է, պատվելի, գոչեցի :

— Սակարկությունն չէ, այս կերպով փրկում ենք մուրթվածներին,
թեթև պայմաններով :

— Թեթև չէ, պատվելի, շատ ծանր է, ասացի, յես դեռես աստուծո
մասին վերջնական յեզրակացության չեմ յեկել :

— Ի՞նչ յեզրակացություն, ի՞նչ բան, կարծես յես շատ եմ հավատում,
գոչեց պատվելին մտերիմ բարկությամբ, ասա՛ այս, դնա՛ գործիդ :

— Չեմ անի, պատասխանեցի վճռական :

Յերկար փնտրուց հետո՝ պատվելին ուզեց ազգակցական մի բարու-
թյուն անել, ավելց ինձ մի հասցե, ուր կարող եյի գործ ճարել, պայմա-
նով, վոր վո՛չ վորին հասելի թե իրենից եմ ստացել հասցեն : Խոստացա անել,
հասցեն ստացա ոտանց պայմաններին և գուրս թոս :

X յեկեղեցու պատվելիները, վորոնց թվին և մի հայ պատվելի, շա-
հազրգոված եյին իրենց յեկեղեցու հաճախորդներն ավելացնելու հարցով, —
ինչքան շատ լինելին հաճախորդները, այնքան շատ յեկամուտներ կստա-
նային պառավ և հարուստ հավատացյալ կանանցից : Նրանք պայմանավոր-
վորված եյին քաղաքի գանազան վաճառատների հետ, վորպեսզի իրենց յե-
կեղեցու անդամներին գործ հայթայթեն, դնեն ծառայության մեջ «ոգնած
լինելու համար բարի քրիստոնյաների» : Դրա համար եր, վոր պատվելիները
պահանջում եյին նախ յեկեղեցու անդամ արձանագրվել և ապա գործի կամ
ծառայության հասցեն ստանալ : Հայ պատվելին մտել եր X յեկեղեցին :
վորովհետև նա խոստացել եր մեծ թվով հայազգի հասարակություն ավե-
լացնել նույն յեկեղեցու հաճախորդների թվի վրա :

Չարմանալի տպավորություն թողեց ինձ վրա այդ հայ քրիստոնյան-
խարզախ և կեղծավոր եր նա իր վոսկորների, մաքի և հոգու ամենահետին
խորշը, բայց անասելի ճշմարտությամբ զինված, նա ասում եր, վոր ամեն
ինչ սուտ է, աստված, կրոն, յեկեղեցի, բայց սուտ չէ, վոր դրանով կարե-
լի չե ապրել մաքրակրոն, քրիստոնեական կեղծավորության դատական այս
յերկրում :

— Սուտ չէ, ասում եր նա, վոր դուք ասանց զբան վատ եք ապրում,
մինչև անգամ զիչերելու մի անկյուն չունեք, իսկ յես միայն դրանցով լավ
եմ ապրում, ուտում, խմում, հագվում, զվարճանում, հեռու Փիզիքական
աշխատանքներից, սրեկան մի յերկու ժամ այտեղ նստում եմ, ամբողջ
կյանքս արդեն ապահոված է : Յերբ յես նրան ատարկեցի, վոր յես խոսում

եմ սկզբունքի մասին, նա ինձ պատասխանեց,

— Սա ել սկզբունք է, աղա՛ս :

Յես ուզեցի խոսել, նա շարունակեց —

— Յեկ շատ դժվարին սկզբունք է, անել մի գործ, վորին չես հավատում,
ծառայել մի գործի, վորի ամենավերջին մասնիկը փուճ է, անբովանդակ,
սա շատ, շատ դժվար է, իմ անսիրտ տղաս, շատ դժվար տանելի սկզբունք է :

Տարիներ անցան և յես շարուպացա բմբունել «անկեղծ» խարզախու-
թյունը, «չահազրգոված» անկեղծությունը : Յես ապշեցի նրա խոսքերից,
դարհուրելի այդ մարդուց : Ստիպված եյի քայլել մի քանի վերստ, առիթ
ունելի մտածելու այդ հայ քրիստոնյայի մասին, մտածում եյի նրա հո-
գու խղճության, մտածում եյի նրա անկշիռ կյանքի փոխարեն շաղկած
այնքան կշտավոր կեղծավորության մասին : Մինչև հասցեն յես յեկա այն
յեզրակացության, վոր ամենավտանգավոր զիվանագիտությունը «անկեղծ»
զիվանագիտությունն է : Այդ որվանից յես ճշմարիտ յերկյուղ եմ զգում այն
մարդկանցից, վորոնք սարսափելի «անկեղծությամբ» են պատմում իրենց
սրիկայությունների մասին, վախենում եմ այն մարդկանցից, վորոնք «ան-
կեղծ» ճշմարտությունն են մատնանչում, վորոնք շահազրգոված են այն-
պիսի «անկեղծությամբ», վորպես «անկեղծության» քողի տակ կարող են
ահավոր շարիքներ գործել :

Յես քեզ չեմ մոտանա, հայ քրիստոնյա՛, դու ինձ սովորեցրիր ավելի
շատ, քան բոլոր դրքերը՝ թեպետների մասին զրված :

Յես հասա պատվելու տված հասցեյին և մտա ներս : Դա փոքրաբանակ
արևելյան գորգերի խանութ եր : Խանութի խորքում կանգնած եր մի բարձ-
րահասակ մարդ, ամերիկյան տարազով, բայց զլիսին թրքական Փես դրած :
Հակառակ այդ Փեսին՝ յես նրան բարեկեցի անզլերեն յեզվով : Նա նույնպես
ինձ անզլերենով պատասխանեց : Պատասխանը թեև յերկու բառ եր, բայց
հաստատում եր նրա անզլերեն յեզվում չքավոր լինելը :

— Յես իմացել եմ, վոր դուք գորգեր ունեք նորոգելու, յես պատրաստ
եմ այդ գործի համար :

— Այո, պատասխանեց նա անզլերեն, բայց շարունակությունը դարձ-
բեց հայերենի. — բայց նորոգվելիք գորգերի մեջ մեկը կա, վոր շատ դժվար
է, յես դրա համար եմ մարդ փնտոում, կարո՞ղ եք դուք, հարցրեց :

— Արևելյան գորգի արվեստում ինձ համար դազանիք չկա, պատասխա-
նեցի գոռոգաբար :

Յեսսովորն ապշեց, աչքերը չուց վրաս և ապա ներս գնաց և գուրս յե-
կավ մի գորգ ձեռքին, փոսց սեղանի վրա : Բերածը պարսկական մետաքսե
գորգ եր, վոր վառվում եր խոր, ճշմարիտ գույներով, հարյուրավոր Փի-
զուրաներով, յերիզներով և ծաղիկներով : Գորգի մի անկյունի մոտերքը
ձեռքի չափ արթուկից այրված տեղ կար : Այդ այրվածքն եր, վոր պետք եր
փրկվել և յես կարող եյի : Այդ գորգը հյուսած կը լիներ պարսիկ մի ազլիկ
իր սիրեկանի սիրույն, վոր տարիներ յերգելով հյուսում է, հյուսում է ան-

վերջ և հարսնութեան որն իր հետ և տանում իբրև սփառ փութու սիրեկանի փոքրի տակ սիրով և արշամբ լուսավորված առադաստի գիշերը:

— Յես կարող եմ հյուանել, սասցի, յեթե լավ կը վճարեք:

— Հը՛, ծիծաղեց Ֆեսավորը, 10,000 դոլլար արժե, յեթե նորոգվի, ինչ կուզեք՝ կտամ, պատասխանեց հեգնորեն:

— 500 դոլլար կը վերցնեմ աշխատանքիս համար:

— Ի՞նչընչան ժամանակի մեջ կարող եք վերջացնել, հարցրեց աստորահանն աչքերը պլստացնելով:

— Յերեք ամսից, պատասխանեցի, առանց մտքումս իսկապես հաշիվ անելու:

Համաձայնվեց: Գործը սկսեցի անմիջապես, վորպեսզի ցույց տամ թե իսկապես կարող եմ անել, յեթե վոչ ավանս չեր տա, իսկ յես ե՛լ չեյի ուզում «գիշերելու սառն» գնալ: Առևտրականը համոզվեց և ինձ ավանս տվեց՝ յերեկոյան գնացի, կերա, պանդուկում սենյակ վարձեցի և դրանից հետո միայն դրեցի իմ բարեկամներին իմ քաջած նեղութունների մասին:

Յես հյուանցի պարսկական մետաքս գորգը առանց յերգելու պարսիկ ազգիկ նման, բայց հյուանցի մտածելով պարսիկ բանաստեղծի նման, մտածեցի, վոր մարդը կըքի, ճարպի և կղկղանքի մի մեքենա յե, վոր լցնում է զեղեցիկ բնությունը կեղտով և զարշահոտությամբ: Մանում էյի յես իմ ժամերը, թեև պատրաստում, բարակ, նուրբ թելեր և հյուանում էյի գորգը իմ թանկագին ժամերի թելերից: Յերեկապում էյի, գորգի հանգույցների հետ կառուցանում էյի մտածման լեռներ, վորոնց բարձունքներից թավալուր ընկնում եր միայն իմ սեփական հողին: Այս մտածումների և յերգների մեջ հանկարծ մտեսնում եր ինձ պրն. Խնայանը, հրձվում եր հանգույցների նրբութունից և բացականչում.

— ԱՖերի՛մ, մանչո, բրավո բե՛, վո՛ր տեղից ես սովորել գու՛ այս արհեստը:

— Սա արհեստ չե, սա արվեստ ե, պատասխանում էյի, կարծելով վոր գեթ այդ յերկուսի տարբերությունը կը գիտենա այդ ապուշը, վոր ամեն ինչ չափում եր բացառապես ամերիկյան դոլլարներով:

— Յես այսքան ել լավ բանաստեղծություններ եմ հյուանում, պրն. Խնայան. սա գուցենրի և մատների արվեստ ե, իսկ մյուսը՝ հոգու արվեստ:

— ԱՖերի՛մ, աՖերի՛մ, բանաստեղծություններ ել ես գրում, աՖերի՛մ, ծո՛, մաշալլա՛, բացականչում եր պրն. Խնայանը և մտահոգվում միայն մի բանով—գործը ավելի արագ եր առաջ գնում, քան յես հավաստիացրի իրեն կամ ինքը կարծում եր:

— Յեթե յես քեզ չափ անգլերեն գիտենամ՝ Ամերիկայի վարային հերը կանիծեմ, ասում եր պրն. Խնայանը և հեռվից հեռու հասկացնում եր, վոր յեթե յես ձեռք քաշեմ դրամատիկական ակադեմիա մտնելուց կամ առհասարակ բանաստեղծությունից՝ կը պահեք նա ինձ իր մոտ և լավ ուժ՝ ճիկ կտար:

— Ի՞նչ պետք ե անեմ խանութում, հարցնում էյի,— նորոգվելիք գորգերը չուտով կը վերջանան:

— Հե՛տո կասեմ, շատ հեշտ գործ կանես, դրեթե գործ չես անի:

Խնայանը խանութի յետե մի փոքրիկ սենյակ ուներ, վոր կահավորված եր իսլամական հարեմների սենյակների փոփոխարեկցան գորգեր, գույնգույն փոփոխ բարձեր, թախտ, արևելյան լվացարան. այդ սենյակի մեջը բացվում եր արևելյան փոքրիկ մի բաղնիս, վորի ամբողջ պատերը հայլուց էյին, հատակը սպիտակ մարմար: Արևելյան սենյակում գրված էյին զայլաններ, թրքական, յեզդիական և դանազան տեսակի ծխախոտներ: Այդ սենյակում վոչինչ չեր խնայված, վոր հեշտանք առաջացնի: Ներս մտնողը զգում եր այնպիսի տարածուն, ախրող ծուլութուն, վորի նմանը միայն զգում են արևելքում կրոնավորները և կաթոլիկ յեկեղեցու սպասավորները:

Մի ուր հարցրի պրն. Խնայանին.

— Ի՞նչ բանի ե ծառայում այդ սենյակը:

Նա ցինիկորեն ծիծաղեց և աչքերիս խորքը հատելով, պատասխանեց.— Գու շատ ես կարդացել, լավ անգլերեն գիտես, ամերիկյան հեղինակներին ճանաչում ես, ինքը ել գրում ես, բայց տակավին շատ բաներ չգիտես, այդ սենյակն ե, վոր տալիս ե ինձ իմ հանապազոր հացը:

Յես չհասկացա Խնայանի խորին խոսքերի իմաստը. նա այդ որերում հաճախորդներ չեր ընդունել, վոր իմանայի խանութի դանազան սենյակների ֆունկցիաները:

Խնայանի խանութում յես ծանոթացա Կիրակոսյանն ազգանունով մի մարդու: Կիրակոսյանը կը լիներ մտավորապես Ա) տարեկան, սպիտակ թելեր ուներ գլխի վրա և մի բուրբ մեջ, բարձրահասակ եր, վորից մի տեսակ կեղծ հպարտություն եր արտացոլում, խոսելիս հայտնի եր, վոր կըթված եր, կարող եր խոսել ամեն նյութի մասին տանելի հմտությամբ, բայց վո՛չ վոք չեր կարող գուշակել թե ինչ գործով եր զբաղվում: Ծխում եր սև սիգար, պատմում եր ամենալավը անեկդոտներ, սիրում եր ծուլությունը, հեշտանքը, ընկողմանում եր թախտի վրա, աչքերը սեւեւում եր հեռու, յերազուն, յերբեմն ինքն իրան ծիծաղում եր հեգնաբար, մտքումը կամ այն եր մեկին եր ծաղրում և կամ մի միտք եր արհամարհում: ՎՂ՛

Կիրակոսյանը շատ մոտ եր Խնայանին: Խնայանը նրան համարում եր արտակարգ խելոք մարդ և ամեն ինչ, վոր անում եր, նրան եր հարցնում անելուց առաջ, միշտ նրա խորհուրդներով եր շարժվում: Խնայանը յերբեմն հպարտությամբ և բավականությամբ ասում եր.

— Կիրակոսյանն ել զոյգապես առաց:

Յես ինքս ել շատ մտերմացա Կիրակոսյանին, վորովհետեվ նա շատ դյուրամտեղի մարդ եր, ընկերական, միշտ գալիս եր մոտս, գիտում եր ինչպես եմ հյուանում գորգը, յերբեմն գորգի արվեստի վերաբերյալ հարցեր եր տալիս: Նա շատ սիրում եր ծանոթներ ունենալ, վորոնց հետ կարողանար նստել և յերկար խոսել և մանավանդ անեկդոտներ պատմել: Յես նրանից լսել եմ հարյուրավոր լավիչ անեկդոտներ, վորոնցից և վոչ մեկը չի կարելի վորեւ կերպ

գրական դարձվածքներով արտահայտել: Յևս նրա անունը «ճուլուժյուն» էլի գրել և շատ անգամ յերբ գալիս եր, ասում էլի:

- Բարե, բարե, պրն. ճուլուժյուն:
- Նա շափազանց բավական եր մնում այդ մականունից:
- Վերջապես մի սր յես նրան հարցրի:
- Ի՞նչ գործով եք գրադվում, պրն. Կիրակոսյան,
- Հը՞, գո՞րծ, ասաց Կիրակոսյանը և յերկար ծիծաղեց. միևնույն և, իմ գործի տեսակը քեզ սդտակար չի լինի, գուք իդեալիստ մարդ եք:

Հետաքրքրությունս բոցավառվեց, նրա գործի տեսակը հասկանալը ինձ համար դարձավ կիրք:

- Մի սր նա ասաց ինձ:
- Յեթե այդքան հետաքրքրվում եք կիրակի որը յեկեք... փոզոցի և ի ավրնյուի անկյունը, կը տեսնեք:
- Անմիջապես գուշակեցի—ձեռնածու և: Սկսեցի ծիծաղել:
- Ծիծաղելը կիրակի որը տեսնեք, ասաց Կիրակոսյանը և գնաց:
- Ուրեմն ճիշտ էլի, նա ձեռնածու եր:
- Պիտի գնա՞ք կիրակի, հարցրեց ինձ Խնայանը Կիրակոսյանի գնալուց հետո:

- Անպայման, պատասխանեցի:
- Խնայանն էլ ծիծաղեց: Նա յեցի նրա աչքերին: Հեզնո՞ւմ եր ինձ—վո՛չ, նրա՞ն եր հեզնում—վո՛չ, ի՞նչ եր ուզում ասել ուրեմն: Միթե՞ ծիծաղում եր նրա համար, վոր յես իմացա թե ինչ գործով եր գրադված:
- Գործդ չուտով կը վերջացնես, հա՛, մանչս, գուշեց հանկարծ պրն. Խնայանը, կարծես ուզեց խոսակցությունը փոխել:
- Այո՛:
- Ապա յերեք ամի՞ս էլիք աշխատելու:
- Այոպես յեզավ, ի՞նչ արած, քեզ համար ի՞նչ տարբերություն:
- 500 գոլլար և, մի՛ մոտանա, գուշեց Խնայանը, վորի ձայնի մեջ խոսուեկ ցավի շեշտ կար 500 գոլլարի համար:
- 10,000 գոլլար արժե, մի՛ մոտանա, վրա բերի:
- Աղեկ, աղեկ, չարսենակի՛ր, ասաց Խնայանը և հեռացավ:

Խնայանի խանութի հաճախորդները բոլորն էլ կանայք էլին: Արեւելյան գորգերի փոքրաքանակ գնողները ասհասարակ կանայք են լինում, բայց խառխուռն, ամեն հասակի: Խնայանի խանութի հաճախորդները տարբերվում էլին ուրիշ խանութների հաճախորդներից. նրանք բոս տարիքի միատեսակ էլին, բաժիթատ ամերիկուհիներ, վորոնք հերոսաբար կովում են պատավության դեմ, չլքելով յերիտասարդական ձեպերը, յերիտասարդության հաճույքի, ուրախությունների մատերեպը:

Իմ աշխատանքը վերջանալու վրա յեր. սկսեցի գանդազ աշխատել, մանավանդ յերբ գուշակեցի, վոր պրն. Խնայանը յերեք ամսի փոխարեն 25 սր աշխատելուս համար՝ ուզում է իր խոստացածից ավելի պակաս վճարել ինձ,

այնպես վոր յես առիթ ունեյի յերբեմն գուքս գալու և դիտելու նրան հաճախորդների հետ խոսելիս վաճառքի ժամանակ:

Յերբ հաճախորդը ներս եր մտնում, Խնայանը գաղափարով մտնում եր իր փոքրիկ գրասենյակը, հայելու առջև մազերը հարգարում, յերեսին փոշի քսում, ֆեար դնում և գուքս գալիս անապարելով հաճախորդուհուն բարեկու: Ըստ հաճախորդի շափի, գուշի և տեսակի ցանկության, սկսում եր նրան ցույց ասլ գորգեր միշտ ուսումնասիրելով նրան: Ինչքան վոր Խնայանը տղես եր զիտության մեջ, նա շատ հմուտ եր իր առևտրում. նա կարող եր մի տող՝ պարզ գրված՝ Հհասկանալ, բայց կարող եր մանրադնին ուսումնասիրել իր հաճախորդին գնող լինելու կամ չլինելու ինդրում: Յերբեմն նա մինչև անգամ հաճախորդուհու ներս մտնելու մոմենտում, նրա քայլվածքից, մանավանդ նրա գլխի բռնվածքից գուշակում եր թե «նրանից հաց կելլա՞, թե վոչ»: Ելալուց ան նրան գորգերի առատությամբ, թե տեսակով, թե չափով և թե գույներով: Յեթե կարողանար ծախել, լավ, բայց յերբ տեսներ, վոր հաճախորդը փախչում է ուրիշ ող գալու և նորից նայելու խոստումով, նրան հրապիրում եր իր արևելյան սենյակը: Հաճախորդուհին ներս եր մտնում թե չե, յես լուծ էլի սովորական ամերիկուհու բացականչությունը—«՛հ, ի՞նչ գեղեցիկ է»: Վայրկենական ներս եր մտնում և մի սեղանի վրա հեղ ջուրի և նրան մատուցում եր մանուշակից պատրաստված քաղցրավենիք, վորը Խնայանը հատուկ բերել եր տալիս Փոքր Ասիայի խորքերից: Խնայանը մի քիչ խոսում եր նրա հետ, այստեղ ներդրություն եր խնդրում, և գուքս եր գալիս:

Գուքս գալուց հետո մտանում եր ինձ Խնայանը և մրթմրթում.

- Բաժիթարը արդեն ջրբովեց, հիմա բոլոր վիճակներ կը թողնի և առուտուրն էլ կը հաջողվի:

Խնայանի գուքս գալուց հետո նեղրուհին առաջարկում եր հաճախորդ ամերիկուհուհուն հանվել և լողանալ, ցույց տալով նրան փոքրիկ, Փանտաստիկ բազնիսը: Կինը հանվում եր, մերկանում և մտնում բազնիս: Նեղրուհին մտնում եր բազնիս, արևելյան հոտավետ կալով ծածկում նրա մարմինը, արարական յուզեր քսում, յուզեր, վորոնք գնվում էլին հենց՝ Նյու Յորկում: Նեղրուհին մեղկացնում, հեղկացնում եր նրան և յերբ նա ամերիկուհուհու գուքս եր բերում խալլինելով փաթաթված և տեղափորում հեշտանուտ թախտի վրա, բաժիթարը իրեն գգում եր մեկը արեվելյի այն թագուհիներից, վորոնց մասին կարգացել եր զրքերում, կամ լսել եր արեվելում ճամբորդողներից: Ամերիկուհին պատկում եր թախտի վրա, առամները ցցած, վոսկրոտ և նիհար, թեևըր ճուլուրեն յերերացնելով դես ու դեն, աչքերը արուշտրեն յերագուն: Սկսում եր քաշել նա գալլանը առաջին անգամ իր կյանքում: Այդ արամագրությունների մեջ ամերիկուհին պատրաստ եր բնդունելու ամեն ինչ, հնարանդելու ամեն հրավերի, չգիմազրելու վորեկ վոտնձգության: Նեղրուհին սկսում եր նրա հետ խոսել կանանց համար վանդալոր, բայց հաճելի նյութերի մասին, շոշափում եր նրա կանացի ներքին արամագրությունները և հանկարծ բաց եր անում գուքս և աչքի սև գնդիկներով յերթելով՝ նշան եր անում Խնայանին: Խնայանը արդեն նոր ամիլիսը իր լինում փոշի քսած,

99. 89/65



մազերը հարգած, զանազան հոտերով լցված ձեռները, մտնում էր ներս: Խնայանի ներս մտնելուց հետո նեղբուհին յետևի դռնից քաշվում էր խոհանոց, մինչև ամերկուհին հազնվեր և Խնայանի հետ դուրս գար արևելյան հարևանից: Ամերկուհին խանութը թողնելուց առաջ ձեռքերը վերով և խորը բավականութամբ թեթևակի ընտրում էր մի քանի գորգ, չեքը գրում և դուրս գնում: «Հաճախորդուհու» դուրս գնալուց հետո՝ Խնայանը, չեքը ձեռքին, կանգնում էր խանութի մեջտեղը, կոտրատվում, մի յերկար և ձանձրացուցիչ ոճ քաշում և ասում:

— Այս էլ գնաց, հե՛յ աշխարհ...

Այդ կանչում էր ծառային, վոր հատակին փռված գորգերը ծալի և տեղափոխի իրենց տեղերը: Խնայանն այս բոլորն անում էր արտակարգ բրնականութամբ: Ամեն մի այսպիսի «առևտրից» հետո, Խնայանը սպասում էր, վոր այդ բոլոր կատարվածի մասին վիճելի հետը և ինքը առիթ ունենար զանազան բացատրություններ տալու ինձ, բայց յես նողկանքից, լրացիլությունից կշտացած՝ վորոշել էյի վոր մի խոսք չասել, բայց Խնայանը այդ վերջին անգամին չհամբերեց:

— Տես՞ր ինչպես ծախեցի, բացականչեց նա:

Զգատասխանեցի:

— Ծախված խալիչաների մեջ 1200 դոլլար ոգուտ մնաց, իսկ ինձ վրա միայն 13 դոլլար նստեց, չարունակեց նա:

Ելի չգատասխանեցի:

— Բո կարգացած գրքերը բոլորը կը ծալեմ և վրան կը նստեմ, ելի շարունակեց Խնայանը:

Համառորեն լուռ էմ:

— Այդ փողի մեկ հարյուրերորդովը յերեկոյան վերիի նման աղջիկ կը գրկեմ, ավելացրեց Խնայանը և էլ պատասխանի չսպասեց և մտավ գրասենյակը:

Մի քանի օրից վերջանում էր իմ գործը, կիրակին էլ հասավ և յես պետք էր գնայի այն փողոցների անկյունը, վորտեղ պետք էր ծանոթանայի Կիրակոսյանի գործի տեսակի հետ: Կետորից հետո, ժամը 3 էր, յերբ հասա ասած վայրը, բայց նրան չգտա այնտեղ: Մոտեցա վոստիկանին և հարցրի:

— Կիրակի օրերը այստեղ ձեռնածուները իսպրի սարքում են:

— Վո՛չ, այստեղ ձեռնածուներ չկան, պատասխանեց վոստիկանը, ի՞նչ քանի մասին եք խոսում:

Հեռացա վոստիկանից և կանգնեցի անկյունը՝ հիշելով, վոր Կիրակոսյանը ինձ ասել էր ժամը 3-ից մինչև 4-ը կը լինի այստեղ: Բիչ անց յեկավ Փրկության Բանակի օրկեստրը և սկսեց նվագել կրոնական մարչը «Առաջ, քրիստոնյա զինվորներ»։ բավական բազմություն հավաքվեց: Փրկության Բանակի յերիտասարդ աղջիկները, սև զլխարկներով, վրաները կարծիր ժապավեններով, սկսեցին փոքրիկ բրուշաքներ վաճառել, մի հաս էլ ինձ ավին «Յեկե՛ք Բրիտանոսին» վերնագրով: Սկսեցի թերթատել բրուշաքը, յերբ մի ավտոմոբիլ յեկավ և քանդակեց օրկեստրի տաղ, օրկեստրը լուց և մեկը ավտոմո-

բիլի վրա կանգնած, սկսեց ճառել: Աչքերս հառեցի խոսողին-Կիրակոսյանն էր: Վողեորված էր նա ինչպես ընտրական պայքարի պրոպագանդիստ, ճառում էր Բրիտանոսի կյանքի գեղեցկություն, կրոնական վագու և հերոսության մասին, նա հորդորում էր թողնել մոլորություն և հավիտենական կորուստի ճանապարհները, հանձնարարելով քրիստոնեությունը թե այս և թե հանդերձյալ կյանքի համար իբրև միակ փրկությունը:

— Յեկե՛ք Բրիտանոսին, ազազակում էր նա, յեկե՛ք խաչելություն, դոհաբերություն և անձնուբացություն դժվարին ճանապարհներով: Ավելի լավ է լինել հասարակ քաղաքացի աստվածային հանրապետություն, քան ամենամեծ քաղաքացին աշխարհային հանրապետություն մեջ:

Ժողովուրդը բերանը բաց լուռ էր: Իսկապես վոր Կիրակոսյանը վողեվորում էր նրանց: Նրանք վորոնք մերժել էյին զնեղ աղջիկների վաճառած գրքերից, պահանջում էյին և մի մի օրինակ գնում: Կիրակոսյանը ճառը վերջացրեց առանց ձանձրացնելու, օրկեստրը սկսեց նվագել կրոնական մի յերգ-«Բեգ եմ գալիս, տեր աստված»-վարից հետո Կիրակոսյանը աչքերը փակեց, թեվերը տարածեց շոքում, միբուքը տնկեց և սկսեց աղոթել: Այդ աղոթքը մոտավորապես հիշում էմ և չեմ կարող այստեղ չարձանագրել:

«Տե՛ր, յես անարժան եմ այս առաքելության, պաղատում եմ նախ և առաջ իմ փրկությունը քան մոլորվածներինը, չար է աշխարհը, տե՛ր, անախման գայրակեցուցիչ, ծաղիկները, վոր փթթում են, հրապուրում են մեզ, մեղքերը վոր ուղարկվել են աշխարհ, հրապուրում են մեր յտեղն, անոգնական, բիթեռներին քեռի չափ տկար մեր հոգիները, ամենից առաջ ինձ կեռի՛ր, տե՛ր, քա ամենամիտ ծառային, տո՛ւր ինձ իմ ամենորջա չոր հացը և յես պատրաստ եմ ծառայելու, ամե՛ն:

Կիրակոսյանը բավական յերկար ժամանակ, թեևրը ոգում, աչքերը փակ և միբուքը տնկած մնաց: Նա դեռ այդ գիրքումն էր, յերբ օրկեստրը սկսեց նվագել տխուր, միտտիկական մի յեղանակ-«յերբ աշխարհը մոլորվում է մեղքի քամքաներում»: Նվագը դեռ վերջացած չէր, յերբ Կիրակոսյանը ձեռները ծալեց կրծքի վրա, գլուխը կախ արավ, բայց աչքերը մնացին փակ՝ մինչև նվագի վերջը:

Դեռևս ավտոմոբիլը չէր շարժվել, զուցնում էր, վոր գնար, յերբ յես մոտեցա ավտոմոբիլին և սեղմեցի Կիրակոսյանի ձեռքը, միայն ցույց տալու համար, վոր յեկել էյի ծանոթանալու իր գործի տեսակի հետ: Նա ինձ մի ճաշարանի հասցե տվեց, աչքերի մեկը փակեց և խնդրեց, վոր յերեկոյան ժամը 8-ին պատահեմ իրեն: Խոստացա և հեռացա: Ավտոմոբիլը սուրաց և կորավեց Նյու Յորկի ահարկու տարածության և ժխորի մեջ:

Քայլեցի վոտով մինչև «Տայվո Սկուարը», ուր կանգ առի հոգնած, կանգ առի այնտեղ, ուր մարդկությունը անցնում է թավալուն և խելացնոր վագրով, ուր ավտոմոբիլները սուրում են, կարծես մի վերահաս աղետ հարածելիս լինեք նրանց, ուր բյուրավոր լույսեր են վառում, վառում, վառում: Տայվո Սկուարից մարդու աչքերը չեն հափշտակվում կապույտ յերկնքի աստղերից, այնտեղից յերկնքի աստղերը յերեվում են ստառած, հիվանդ և

անվայլ, վորովհետև ներքևում յերկրային աստղերը անմարդկային շր-
ուայությամբ հոսում են յույս, հոսում են անվերջ, հազար ու մեկ խաղերով
և աշխարհակներով: Կանգնած ստորյերկրյա արամվայի կայարանի մոտիկ՝
դիտում եմ յույսի ծովը և ինձ թվում է, վոր խորտակվել են յերկիրները և
իրենց բոյսը աստղերը թափել են այտեղ, վորոնք դատապարտված են այս-
փերու հափտանական տենդի մեջ, յեթե վոչ ինչո՞ւ այսքան յույս, ինչո՞ւ
այսքան շտապություն, ինչո՞ւ այսքան արագություն և ինչո՞ւ այսքան մա-
շուժն ասրերի: Չանագան մեծ վաճառատների առաջ թափառելուց հետո՝ իջ-
նում եմ ստորյերկրյա արամվայը, ուր ահավոր մի բազմություն աճապա-
րում է մանել, հրվել վազոնների մեջ. ահա գալիս է կառախումբը, վորպես
զարկերակը հոգին, գալիս է ահարկու, խլացուցիչ, բայց վոզելարիչ աղ-
մուկով, մի ակնթարթ և ահավոր բազմությունը տեղավորված է վազոնների
մեջ ամենավերջին կարգապահությամբ: Չեմ մտնում ներս, գեոես ժամա-
նակ ունեմ ժամագրությանս հասնելու: Յերեվի ավելի գառարկ կլինեն հա-
ջորդ վազոնները: Կառախումբը սողում, սլանում և հոգի բնդերքներից, աշ-
քերս գամված են մնում ամենավերջի վազոնի յետևում՝ վառված վառնդի
նշանի կարմիր յայտերին, մինչև մի կես և դառնում նա և կորսվում: Ելի
ահավոր բազմություն, խոնվում է, բարդվում, խճողվում, խոնվում և ա-
ղետի արագությամբ: Երևա են մտնում յերկու նախաստիներ, ուրախ ու գը-
վարթ, յերեկի սվկիանի բացերից նոր են ցամաք իջել: Հարբած են, յերգում
են ծովերի մարդկանց առուգությամբ և սանձարձակությամբ, գրկում են
իրար, համբուրվում, գալիս, կանգնում են վտանգալիս կետում, յեզերքը,
ուր մի աննշան անզուլուցություն կարող և լինել մահացու, կառախումբի աղ-
մուկը գեո շրված, ներս է խուժում նրանից հարձակված սղր աշնանային ուժ-
գին բաժու նման, զլխարկներ և թոցնում և կանանց բզանցքները վեր բարձ-
բացնում: Նախաստիները յերգում են, յերգում են ծովերի մարդկանց առույ-
գությամբ և սանձարձակությամբ, յերերվում են յեզերքի վրա անհող-
ինչպես ծովերի մարդիկ. կառախումբը գալիս է, կարում նրանց, նրանց
վտանները թոչում են կայարանում, նետված վտակները անգամ ծանր վի-
րավորում են մի քանի ճամբորդների, իսկ նրանց իրանները և գլուխները
ջարդ ու փշուր են լինում և կորսվում են փակուղում, կորսվում են իրենց
յերգի նման: Մի ակնթարթ իրարանցում, ծառայողներն իջնում են ներքև,
զգուշանալով ելերտրականացած ուկյաներից, մեծ կողմների մեջ հավաքում
են մարդկային անձանաչելի բեկորներ, մինչ հետախոսները գործում են հա-
ղորդելու նախընթաց և հաջորդ կայարաններին, վոր №... և կապերսը կու-
շանա 5 բույսով: Այս անգամ մտնում եմ ներս, ընկձված եմ և գլխակոր, կա-
ռախումբը շաչում է, կարծես մտնում է վոզրադին, մարդիկ հանդիսո թերթ
են կարգում, շարունակում իրենց-անտանելի ասորյան—«խնդրեմ, շնորհա-
կալ եմ, ո՛ր, այո՛, ինչպե՛ս չե՛, 7-ր 55 անց»—այսպես անվերջ, վո՛չ վոք չի խո-
սում ծովերի մարդկանց մասին, վորոնք յերգում էլին ծովերի մարդկանց
առույգությամբ և սանձարձակությամբ, վորոնք գնացին գարհուրելի մի
ակնթարթում՝ ճիշտ ծովերի մարդկանց նման:

Ժամը 8-ից մինչև անգամ մի քանի բույս առաջ մտա այն ճաշարանը,
վորտեղ Կիրակոսյանն ինձ պետք էր պատահեր: Գա մի շատ չքեղ ճաշարան էր,
ընդհանուր մանիշակագույն գեկորացիայով—սեղանները, աթոռները, պա-
տերը և առաստաղը: Ամեն մի սեղանի վրա դրված էր մի մի փոքրիկ մանիշա-
կագույն լուսամտիփով լապտեր, ճաշարանն ընդհանուր յուսավորություն
չունեի, այնպես վոր դժվար չեղավ ինձ համար Կիրակոսյանին անմիջապես
գտնել: Կիրակոսյանն ինձանից առաջ էր գնացել, առաջը գրել էր մի բաժազ
թուիս գարեջուր և քիչ քիչ խմում էր, յերբ մոտեցա իրեն:

- Ձեզ էլի սպասում, ասաց Կիրակոսյանը:
- Ուշ չեմ, պատասխանեցի:
- Վո՛չ, ուշ չեք, նստեցեք: ՇՅ
- Նստեցա: Սեամորթը մոտեցավ անմիջապես, մի բաժակ սառույցով լիքը
ջուր գրեց առաջս և կանգնեց:

— Մի բաժակ գարեջուր, ասացի սեամորթին:
Սեամորթը շրջանակաձև մի շարժում արավ և հեռացավ: Յես մի պահ
լուռ մնացի, Կիրակոսյանը հայտնապես ջղային մի կացություն էր ապրում.
յերեկ նա ուզում էր, վոր խոսք բանայի իր ճառի մասին, բայց հարմար չէլի
գտնում:

- Ի՞նչպես հավանեցիք իմ ճառը, հարցրեց վերջապես Կիրակոսյանը:
- Սեամորթը մի բաժակ գարեջուր գրեց սեղանի վրա և գնաց:
- Ճառը արվեստի տեսակետից լավ էր, ասացի, բովանդակության մա-
սին վոչինչ չունեմ ասելու, վորովհետև յես քրիստոնեյության չեմ հավա-
սում:

Կիրակոսյանը շրթունքները ցավալին կծկեց և աղահոբեն ինձ էր գի-
տում և սպասում էր խոսքի վերջանալուն: Յես շարունակեցի.

- Բայց ինձ շիթեցրեց ձեր աղոթքը, պրն. Կիրակոսյան, — անարժան
առաքելություն, մեղքերի հրապուրանք, տկար հոգի—այս բոլորը ինձ շա-
փազանց զարմացրին:

- Այդ աղոթքը շատ անկեղծ էր, վորովհետև յես ինքս էլ եմ խոստո-
վանում, վոր իմ ճառը սուտ էր, պատասխանեց Կիրակոսյանը:

- Դարձյալ նույն «անկեղծ» խարդախությունը, մտածեցի, զարձյալ
շարությամբ, կեղծավորությամբ յեցուն «անկեղծությունը»:

- Յեթե չեք հավաստում, ինչո՞ւ յեք ասում, հարցրի շատ վճռական և
կարուկ:

Կիրակոսյանը յերկու ումոկ ևս քաշեց գարեջրից:

- Ասում եմ, շարունակեց նա, վորովհետև շատ եմ սիրում աշխարհը,
աշխարհը շատ սիրելուս համար յերկնքի թաղավորությունն եմ քարոզում:
Ամեն ինչ պարզ էր, սա էլ այն յեկեղեցու հայ քրիստոնեյայի նման էր:

- Այտեղ մի լավ ճաշեք, հետո կը գնանք մի տեղ, յես ուզում եմ քեզ
մի տեղ տանել, վորպեսզի տեսնես աշխարհը, ինչ վոր դուքսն և յերեւում,
աշխարհը չե՛, աշխարհը, իսկական, սիրեկան, հրապուրիչ աշխարհը միշտ

Թագնված է, ամենազուգուրդ բաները միշտ թագնված են, յես սիրում եմ թագնված բաները, ճառեց Կիրակոսյանը:

Մենք ընթերցեցինք, դանազան հարցերի շուրջը վիճեցինք և դուրս յեկանք: Կիրակոսյանը մի ավտոմոբիլ կանչեց: Նստանք: Յես մտքերով տարված եյի, յերբ Կիրակոսյանը մի հասցե ավեց շոֆերին: Ավտոմոբիլը սուրաց: Ճանապարհին մենք վո՛չ մի խոսք չփոխանակեցինք իրար հետ: Անցնում եյինք Ծրք Ավրնյուլից, կապիտալի այս հորձանուտ գետից, վոսկու, ադամանդի, ապրանքի, կրքի, ճարպի, լույսի և շոպյության այս անավոր հովտից: Անցնում ենք բարձրաբերձ հյուրանոցներից, մանուֆակտուրայի քեճամեճ շենքերից, ունիվերսալ խանութներից, հարյուրավոր թաարոններից և կինոններից, սողում են ավտոմոբիլները այնքան արագ և այնքան կարգապահ, կանգ ենք առնում յուրաքանչյուր խաչաձևող փողոցների կետում վերեկից կախված զգուշության կարմիր լույսից, անցնում ենք, յերբ բացվում և վտանգի բացակայությունն ազդարարող կանաչ լույսը, արոտուարներում մարդկային յերկու հոսանք վազում և, թափվում ջրվեժի նման վերից վար և վարից վեր, հոսանքներ աջ ու ձախ, բորբոն ևլ աճապարում են, ինչպես խոյամական հուզարկավորության լուռ, մտախճ ամբոխը: Նայում եմ Կիրակոսյանին, նրա աչքերը հրճվում են, ինչպես աչքերը նոր ուրախության սպասող գեոտաի ազնկան, կծում և շրթունքները սպասողի նման, վառում և սիգարը, քաշում մինչև թոքերի խորքը և ինչ վոր մի բան փոփոխում ինքն իրեն:

Նյու Յորկի Ծրք ավրնյու, ուր կապիտալը ամեն սր արձանագրում և մարդկային սարսափելի անկումների ու բարձրացումների պատմությունը, այսոր մազնատ, տեր ու տիրական ամբողջ դասակարգերի, հաջորդ որը ընկած մարդկային խորխորատը, դալարվում և կարիքի, չքավորության, անհեղինակության ազիտորձ հիրաններում: Մոնչում և այստեղ կապիտալը, տարածում և իր վայրենի ճիրանները, կարծես փոռնում և ուժից, հզգիացածությունից, ինչպես փոռնում և հազարավոր շների մի ամբոխ քաղցածության և ցրտի մեջ թողված անմարդարնակ և անկենդանաբնակ մի կղզում: Գոռում և կապիտալը, վարպես կատաղած ծովը նոյեմբերին: Այդ գոռում գոչումների, փոռնոցների ու մոնչյունների միջից լսվում և խուլ, հեռավոր, համառ և անզիմազրելի մի հեոց շղթայված, բարկացած և կարիքավոր բազմությունների: Բարկությունը այդ բազմությունների, վորի հեռավոր մտապատկերն անգամ կարող և անավոր սարսուռներով դողացնել գիտակցությունը, նա, այդ բարկությունը ման և գայիս մթում, հասարակական կյանքի նատիրում, վորի աչքերի բյուրեղները փայլատակում են ինչպես պայթած սուժրը խավարում, այդ բարկությունը ուռձանում և, հզորանում հարած յերկավի ու մեքենաների անարկու ազմուկով:

— Ստո՛ւպ, կանգնեցնում և վոստիկանը մեր ավտոն՝ սրենքից դուրս աբազ ենք ջշում՝ առնում և մեր համարը և բաց և թողնում: Շոֆերը հանգիստ և, Կիրակոսյանը խոստացել և վճարել տուգանքը, նա ուզում և շուտ հասնել: Քիչ անց մենք կանգ ենք առնում մի ապարամանի առաջ: Կիրակոսյանը վրձարում և վարձքը և տուգանքը, մտնում ենք մուտքի դռնից, այս դռան ու

ներսի դռան միջև մի փոքրիկ քառակուսի տարածություն կա, վորի սպասերի վրա տեյեֆոնի ընդունարանի անցքեր կան, և յուրաքանչյուր անցքի համար մի ելեկտրական կոճակ, սղմում և Կիրակոսյանը նրանցից մեկը:

— Հըր՛. վերեկից ձայնում են խուլորեն,
— Հըլ՛, Դե՛ղի, յես եմ:

Ծիծաղում և վերեկից: Ներսի դուռը մեքենայրեն բացվում և, ներս ենք մտնում և բարձրանում սանդուխքներով և յերկրորդ հարկի վրա կանգ ենք առնում մի դռան առաջ, Կիրակոսյանը դռան կոճակը չի սղմում, մի ակընթարթ և դուռը բացվում և, մեզ դիմավորում և հաստ, կարճ, այլանդակ անասնական շրթունքներով մի նեղբուհի, վորի Ժպիտը չի կարելի տարբերել անմեղ յերեխայի Ժպիտից: Բարևում ենք նեղբուհուն և հետևում ենք նրան, մտնում ենք մի դահլիճ կատաղի, վառ, կենդանի դույներով զարգարված, վորի հասակին փոփած և պարսկական մի դորզ, Շիրազի և Սորասանի բոլոր յերանդային հարստություններով խոսացված: Ընկզմվում ենք թավշյա բազկաթոռների մեջ:

— Այս բուպէյիս, ասաց Դեղին, Ժպտաց ձուռնասպիտակ առամների միջից ու հեռացավ:

Բազկաթոռում յես անսահման հեշտանք զզացի, զզացի վոր հանդստանում եմ, բայց յերկար չառեց այդ, միտս ընկան նավաստիները, վոր յերզում եյին ու հլժա չկան:

Ներս մտավ մի ջահել սպիտակ նեղբուհի, կիսամերկ հագնված:

Այնպիսի կիսամերկություն, վոր ավելի յե հուզում ցանկությունը:

Կիրակոսյանը բարձրացավ, վազեց ու գրկեց նրան և շտապեց ինձ ծանոթացնել, ինձ ներկայացրեց մի ուսանող, վոր յեկել և աշխարհ տեսնելու:

— Բերել և աշխարհը ցույց տալու, ուղղեցի նրան:

— Միկենույն և, պատասխանեց Քրիստոսի ծառան և նեղբուհուն գրկելով բերեց և նստեցրեց ծնկանը:

Յես հասցեի սպիտակ խափշիկուհուն, վորի մարմինը մարմարյա ուժգնություն ուներ, աչքերը փայլում եյին սև թարթիչների և սպիտակ արտեանունքների միջից, ինչպես սգի տան վառվող սև Պոմը, նա թեթևորեն զալարվում եր, իր թեկերով գրկում Կիրակոսյանի գլուխը, քրիստոսյան թաղում եր խափշիկուհու մարմնի կանացի սուր հոտից հարբած սուռնգերը նրա կրճքի ընդգրկող մսերի մեջ: Լուռ եր նա, միայն անտանական թեթև հեոց եր հանում: Նեղբուհու արյունը վառվում եր իր սպիտակ մարմնի միջից, ինչպես թարմ, կարմիր վարդը նոր թափված ձյունի մեջ:

Դեղին բացեց դուռը և սեղանի վրա գրեց մի շիշ սառը զարեջուր, յերեք բաժակ ու հեռացավ: Սպիտակ նեղբուհին լցրեց բաժակները, մեկը ինձ ավեց, ընդունեցի շնորհակալությամբ, յերկրորդը ավեց Կիրակոսյանին: Կիրակոսյանը չբավականացավ միայն շնորհակալությամբ, գրպանից հանեց 50 դոլլարանոց մի թղթադրամ և նվիրեց նեղբուհուն:

— Աս, ասեց Կիրակոսյանը, հանուն Քրիստոսի վաստակած գրամ և:

Սպիտակ նեղբուհին առավ փողը, գրեց իր գուլպա—գանձարկղում և գրկեցով Կիրակոսյանի գլուխը՝ ազահորեն համբուրեց:

Կիրակոսյանը բաժակ բաժակի յեռեկց գատարկեց, հարբեց, սկսեց նրա մեջ ցանկութեան խոսակամ խարույկը:

Յեւ չուտով դուրս յեկա փողոց, Կիրակոսյանը մնաց այնտեղ, մինչև անգամ չնշմարեց, փոր ես փախչում եմ: Վիթխարի քաղաքի կենտրոնից հեռու ելի, քայլեցի մի քանի փողոց, իջա ստորյերկրյա արամփայր և գնացի հյուրանոց:

Պատկած եմ մահճակալիս վրա, հետեկց ելեքորական փոքրիկ լույսը յուսավորում և որման լրագիրը կարգում եմ:

«Նախահանգստում հյուսիսային ուժեղ քամիների պատճառով սառել են 32 անապատան մայրիկ»:

Յերբ լրագիրը թողի ու հիշեցի Կիրակոսյանին, յեկա այն յեզրակացութեան, փոր նա իսկապես ձեռնածու եր, արմիտտի կատարներին հասած ձեռնածու, փոր խաղում եր «յերկինք»-ի ու յերկրի միջև, մի լարախաղաց՝ կախված արհամբույթի բարձրութեաններից, մի ձեռնածու, փորի վո՛չ թե միայն մարմինն և ձկուն, սճագալար, սողունային, ճարտար ու ճարպիկ, այլ և նրա հոգին, փոր խաղում եր «ստուուձո» և մարդկանց միջև ստեղծածային Ֆինանսով, գնելով սպիտակ նեղբուհուն, փորի մարմինը նման եր ամենամարտա մարմարներին և արյունը հալած, հեղուկացած կարմիր վարդերին:

Մի քանի սր հետո մի քանի ծանոթ հայ ընկերների հետ միասին պատահեցինք պրն. Կիրակոսյանին, փորը մեկ հրավիրեց գինեատուն:

Վո՛չ թե միայն գինեատուն չեյի ուզում գնալ Կիրակոսյանի հետ, այլ և մինչև անգամ չեյի ուզում նրան պատահել քարոզից, ազոթքից և նեղբուհու տանը տեղի ունեցած դեպքից հետո, բայց ընկերներս ստիպեցին, հնարավորութեան չունեյի անմիջապես բացատրելու և նրանց հետ միասին ազամա ներս մտա: Նստեցինք սեղանի շուրջը և սկսեցինք խմել: Կիրակոսյանը ըստ իր սովորութեան անեկզոտներ եր պատմում և բոլորը լիաթուք ծիծաղում էյին:

Մենք խմում էյինք ջինջրբեյլ և շամպայն, իսկ Կիրակոսյանը՝ իր ամենախրեյի թուխ գարեջուրը:

Հանկարծ Կիրակոսյանի գեմբը փոխվեց, ստացավ լուրջ կերպարանք և մեկ հայերեն լեզվով ասեց.

— Տղերք, անդիտեն յեզվով մի ճառ պետք և ասեմ, լուրջ կերպով պետք և լսեք, զգացվե՛ք և ինձ հետ միասին դուրս գաք այս գինեատնից:

— Լավ, պատասխանեցին ընկերներս: Յեւ լուս էյի: Կիրակոսյանը վտախ կանգնեց գարեջրի բաժակը ձեռքը և սկսեց.

— Պարտենե՛ր, յեա ուրախ եմ, փոր հանդիպեցի ձեզ և ձեզ հետ միասին յեկա այստեղ, ուրախ եմ նաև, փոր դուք լսեցիք Հիսուսի խոսքը և խոստացաք դուրս գալ այս վայրից, հեռանալ և յերբեք նորից չմտնել ներս ձեզ կյանքում, Քրիստոսի յեկեղեցու դռները բաց են ընդարձակորեն, բոլոր մո-

լորվածների համար: Խմենք այս վերջին բաժակները և ուխտենք ասածու առաջ, փոր սա լինի վերջինը մեր ամբողջ կյանքում:

Խմեցինք ու դուրս յեկանք գինեատնից իրրև «փչացածներ» և Կիրակոսյանն էլ իրրև մեր «փրկիչը»:

Յերբ դուրս յեկանք, ընկերներից մեկը հարցրեց.
— Ի՞նչ պատահեց, պրն. Կիրակոսյան:

— Մեր վարչութեան անգամներից մեկը ներս մտավ, պատասխանեց Կիրակոսյանը:

Հաջորդ որը Խնայանի մոտ ունեցած աշխատանքս վերջացրի ու հանձնեցի:

— Յեթև ուրիշ աշխատանք ունե՞ք՝ կանեմ, ասեցի յես: չ՛ն

— Շատ գործ ունեմ, բայց դու մեղք ես այդ գործերի համար, քեզ ուրիշ գործ կտամ:

— Ավելի լավ, ասեցի, ավե՛ք:

Խնայանը ինձ առաջարկեց շարաթական 40 դոլլար և «գործ»-ս պետք է լիներ արեւելյան փոքրիկ սենյակում հաճախորդուհիներին «հյուրասիրութեաններ» անել:

Իմ պատասխանս շատ կոպիտ յեղավ պրն. Խնայանին, պահանջեցի իմ 500 դոլլարս, փորպեսզի յերկրորդ որը այլևս իր մոտ չգամ: Նա ինձ իր տրվածների վրա լրացրեց 300 դոլլար և հայտարարեց.

— Մի ամսվա աշխատանքի համար այսքանն էլ բավական է: Զայրույթից մինչև ականջներս վրթակները կարմրեցին և բողբոջեցի, Խնայանը շլտեց:

— Ո՛ւր ուզում ես՝ այնտեղ գնա, ասաց:

Յեւ անմիջապես աճառարեցի փաստարանի մոտ, փորը ինձ ավեց շատ կարուկ պատասխան.

— Քանի փոր ձեր սահարկութեանը գրավոր չե և վո՛չ վոք ել ներկա չե՛ յեղել, վոչինչ չենք կարող անել:

Ել չվերադարձա Խնայանի մոտ, ճիշտ է՝ կորցրի իմ շահելիքից 200 դոլլարը, բայց ճանաչեցի յերկու մարդկանց, փորոնք ապրելու համար շալակել էյին իրենց հոգու ուտերի վրա մարդկային կեղտոտութեան մեծ տոկոսը:

Յերկու որ հետո յես ծառայութեան մտա Նյու Յորկի արեւելյան գորգերի մեծաքանակ վաճառական հայազգի Աշրգրաշյանի վաճառատունը իրրև գորգեր նորոգող և լվացող:

Աշրգրաշյանի վաճառատուն մեջ իմ և իմ ընկերների աշխատանքը ստեղծանակիք եր, որեկան 9-10 ժամ նորոգում էյինք արեւելյան գորգերը, փորոնցից մեծ տոկոսը գալիս եր անտանելի կեղտով բեռնավոր: Գորգերը լրվացվում էյին ելեկտրական լույսով լուսավորված թաց ներքնահարկում, լրվացողների վոտները, թեև սեռին կոչիկներ հագած, բայց անընդհատ ջրի մեջ լինելով՝ սառչում էյին: Ջրի ուժեղ հոսանքով դուրս էյինք բերում գորգերի փոշիները, ապա յեռացրած սապնաջրով փողոզում և հաստ, կոպիտ խոզանակով փայլեցնում, փորից հետո բաց էյինք թողնում սառը ջրի ուժեղ

Տոսանքը, ջրի սառնությունից սապնաջուրը սառչում էր, կաշում էր գորգի
խիտ բրգերին և դուրս չէր գալիս, լվանալուց հետո ել՝ փոքրիկ գորգերը
մի հոգով, իսկ մեծերը մի քանի հոգով, պետք էր կախ տալինք բարձր սյու-
ններից ամենապրիմիտիվ միջոցներով: Ամերիկյան բարձրագույն տեխնիկան
մուտք չէր գործել արևելյան գորգերի վրձ մի վաճառատուն: Հայտարար-
վում էր թերթերում, վոր գորգերը լվացվում են արևելյան տեխնիկայի բարձ-
րագույն սրենքների համաձայն: Ամերիկացին այդ հայտարարությունից շատ
բան էր յերեակայում, իսկ հայտարարությունն էլ սուտ կամ սխալ չէր, ճիշտ
վոր՝ արևելյան տեխնիկայի բարձրագույն սրենքներ: Ամբողջ նկուղը թաց էր,
գորգերի լվացվելուց հետո՝ բացվում էին շոգեվառարանի խողովակները,
վորպեսզի գորգերը շորանային, ստեղծվում էր բազնիսային մի մթնոլորտ,
շոգու և բրգի գարշելի հոտերը խառնվում էին իրար ստեղծելով կատարյալ
գժոխք: Վաճառատան գրեթե բոլոր բանվորներն էլ հայ էին, շատ քիչ էր
պատահում ոտաբազդի բանվոր, իսկ հայերն էլ պատկանում էին տարբեր
տարբեր ազգային կուսակցությունների, վորոնք իրար հետ կովում էին,
իրար հանդեպ ատելությամբ լցված: Մի որ նկուղից հարաչհրոց լավեց, շա-
տերս վազեցինք ներքև, տարբեր կուսակցությունների պատկանող բանվոր-
ներ գորգը լվալու ժամանակ սկսել էին վիճել, վիճարանությունը այնքան էր
աաքացել, վոր մոտանալով ցեմենտի վրա փոված գորգը՝ ջրի խողովակների
ուժգին հոսանքները դարձրել էին իրար վրա: Յերբ մենք հասանք, նրանք
ամբողջովին թրջված էին և ջրի սառնությունից դողում էին և իրար հայ-
հոյում:

- Փողը պետք է գնա պատրիարքարանի միջոցով,
- Տո՛, պատրիարքարա՞նը վորն է, Պոլսում մեր կուսակցություն կենա-
րոնը կա:

Նվազ տաժանելի չէր և գորգ նորոգողների վիճակը. առավոտյան ժամը
8-ին նրանք սկսում էին աշխատանքը և մինչև ժամը 12-ը կուսացած էին լի-
նում գորգի վրա, նրանք գորգը ամուսում էին ծնկների վրա և հյուսում, ար-
դելված էր ծխել կամ «բուշրոդագություն» պարապել, մի ժամ ճաշի դադա-
րից հետո՝ նրանք նորից նստում էին մինչև ժամը 6, 7 և յերբեմն էլ 8 և 9.
նայած թե այդ որվա պատվերները լրացված էին թե վոչ: Գորգերը լինում
էին փոշոտ, տարիներով կոշիկներ էին սրբել այդ գորգերի վրա, հաճախ
թոթվում էին դրանց, բարձրանում էր թոքախախ բոլոր ուժերը պարունա-
կող փոշի: Բոլոր նորոգողներն ու լվացողները մի ձգտում ունեյին—վաճա-
ռատան մեջ ծախող դառնալ կամ գնալ մի փոքրիկ քաղաք և մասնավոր, սե-
փական խանութ բաց անել և հարստանալ: Բոլոր հարուստ գորգավաճա-
ները այդպիսով էին դիպել իրենց հարստությունը: Մեղանից և վո՛չ մեկը
Ունիոնի անդամ չէր: Աչքբաշյանը մասնավորապես հոգածու էր, վոր այդ-
պիսի վտանգավոր սատանա մուտք չգործի իր վաճառատունը: Ով վոր ըս-
կում էր մի քիչ արանջալ կամ ունիոնի պրոպագանդով էր գրաղվում, կան-
չում էր նրան Աչքբաշյանը, կամ ծախող դարձնում, յեթե անգլերեն գիտեր,
կամ ուղարկում էր մի փոքրիկ քաղաք փոքրիկ գրամագլխով և վերջացնում

էր հարցը: Մնացող բանվորները ի հարկե դայրանում էին գնացողի վրա:
— Մեկ քարոզում էր, ամա ինչպե՛ս գործը դրստեց:

Իմ անգլերեն գիտենալս ինձ չուտով տարավ սրահը: Հեռացա նորոգելու
արհեստանոցից և մտա վաճառելու սրահը, ուր շատ տարրինակ գեմքեր
կային—անքուն աչքեր, ծամածուլած բերաններ, մաշած և կարմիր դույն
քամ չրթունքներ: Նրանք շատ անգամ որեկան յերկու անգամ էին սախըր-
վում, խոսում էին իրար դեմ, վո՛չ մեկը մյուսի հետ մտերմիկ հարարե-
րության մեջ չէր, արհամարհում էին իրար, իրար յետեից հագար ու մեկ
լպիլը պատմություններ պատմում, բայց մի կեսում բոլորն էլ գտնվում է-
ին գերագույն ներդաշնակության մեջ—չոզքորթել Աչքբաշյանին: Յերբ
Աչքբաշյանը անցնում էր սրահից՝ խորը կուսում էին, գեմքերը ծոմում
իրեն ժպիտ, և հպարտանում, վոր Աչքբաշյանը փոխանակեց իրենց արևը:

Իմ ներկայությունը շատ տարրինակ թվաց բոլորին:
— ԱՖերիմ քեզի, ասում էին նրանք, մենք 10-25-30 տարի աշխատե-
ցանք նկուղում և արհեստանոցում, հազիվ կարողացանք այստեղ հասնել,
աՖերիմ, ինչպե՛ս շուտ թոար:

— Ինձ համար այստեղն էլ ժամանակավոր է, պատասխանում էյի, յես
չուտով պետք է մտնեմ գրամատիկական ակադեմիա:

— Դրամատիկական ակադեմիա՞, կրկնեց՝ մեկը և սկսեց հրհուալ, փո՛ղ
ասա դու, փո՛ղ, հր՛, ուզում է խաղացող դառնալ:

Յես պատրաստ էյի մի վորեկ կարծր առարկա քթին չպրտել, բայց ան-
հարմար էր:

— Լոի՛ր, ապու՛ւշ, գուտցի, քս գործը չե:
Վոչ վոք ինձ չպաշտպանեց, բոլորն էլ հեռացան և լուցին:

Աչքբաշյանի վաճառատան մեջ մեկը կար, վոր ամեն որ հայանվում էր
կեսորից հետո, ժամը 3-ին կամ 4-ին, հետո կորսվում էր, ելի հայանվում էր
էր ժամը 6-ին և գնորդների հետ դուրս գնում:

Այդ մարդը 45 տարեկանի մոտ, սափրված, սև սիգարը միշտ բերանի
աջ կողմով կծած, այնպես վոր յերբ յերբեմն խոսելու համար սիգարը բըռ-
նում էր, ներքևի չրթունքի վրա կլորած նշան էր յերևում, մեկ աչքի ներքևի
արտեվանունքը վար էր քաշված, վորի հետևանքով բաց մնացած տեղն ար-
յուն էր հավաքված, ճաղատ էր, շատ նուրբ կեղծամով, կարճահասակ,
բայց վիզը անկաճ, ուսերը վեր քարձրացրած, թողնում էր այն տպավորու-
թյունը, վոր կարծես նոր էր քնից գարթնել կիսակատար և ուզում էր քնել:
Յես առիթ չունեցա ծանոթանալու նրա հետ, մի քանի որ հետո մոտեցավ
ինձ և ծանոթացավ:

— Սարայան, ասաց ինձ, ուրախ եմ, վոր այստեղ ծառայում էք, նոր
մարդ էք, դժվարությունների կհանդիպեք, ծանոթացրեք ձեր գնորդներին
ինձ հետ, յես ձեզ կողնեմ ձեր վաճառքում:

Յես բոլորովին չհասկացա թե ինչ էր ուզում ասել, բայց խոսանցա ծա-
նոթացնել իմ գնորդները նրան:

Մեր վաճառատունը մեծաքանակ վաճառատուն էր, մեր հաճախորդ-

ները նահանգներէն, գանազան մեծ և փոքր քաղաքներէն յեկած խանութպաններ և յին, վորոնք յերբեմն մինչև կես միլիոն դոլլարի կրեդիտով ապրանք և յին վերցնում:

Յես յեզրակացրել է յի, վոր Սարայանն Աշրգրաշյանի վաճառատան մեջ բաժնետեր ևր, յեթև փոշ ի՞նչ կապ ունի բոլոր գնորդների հետ, ուզած ժամանակը գալ և գնալ, մանապանդ, վոր ծախողները պակաս պատիվ չէ յին տալիս Սարայանին, վորքան Աշրգրաշյանին: Մի որ այս մտքով ևլ արտոն-հայտվեցի մեր ձերուսի ծախողին, վորը առհասարակ ավելի պարկեշտ մարդ ևր յերևում մյուսներէն: Մերուսին սոկրատայան մի ծիծաղ արձակեց և ինձ նայեց: Յես ընկձվեցի այդ հեղնանքի ծանրութեան տակ:

— Ապա նա ի՞նչ կապ ունի մեր վաճառատան հետ, հարցրի:

— Շատ մեծ կապ ունի, տղաս, ասաց ձերուսին, նա գիշերային ծախող և:

Առաջին անգամն ևր, վոր իմանում է յի թև Աշրգրաշյանի վաճառատունը գիշերները բաց և և վաճառքը շարունակվում և:

— Ուրեմն նա ցանկանում և իմ հաճախորդները ձեռքիցս խլել, ասացի ձերուսի ծախողին, ուրեմն աչքը անկել և նա իմ տոկոսներին:

— Ինչո՞ւ, հարց տվեց ձերուսին սաղած:

— Նա ասաց, վոր իմ գնորդները ծանոթացնեմ իրեն, նա ինձ կողմի իմ վաճառքում, պատասխանեցի:

— Ծիչա և, ճիչա և, ծանոթացրեք, հարեց ձերուսին և սկսեց բարձրաձայն ծիծաղել:

Յես սաղած է յի:

Մյուս որն իմ հեռաքրքրութեանը հազուրդ գտավ: Իմացա, վոր Սարայանը մեզ նման ծառայող ևր Աշրգրաշյանի վաճառատանը, բայց ուրիշ առատոց ֆունկցիաներով: Ամեն յերեկո նա պարտական ևր հյուրասիրել գրսի քաղաքից յեկած գնորդներին հանրատներում և այնտեղերում վերջացնել առևտուրը: Այն ժամանակ յես հասկացա արդեն թև ինչո՞ւ նա միշտ մոտենում ևր գնորդներին, շատերին վաղուց ծանոթ ևր, հրավիրում ևր նրանց ընթրիքի և դրանից հետո մոտենում ևր հեռախոսին, պահանջում ևր մի համար և ասում:

— Հըրո՛, Անտի՛, այս յերեկո միայն յերեք հոգի և կախում ևր ընդունողը:

Աշրգրաշյանը պայմանավորված ևր մի քանի հանրատների հետ, վորպէս Սարայանը հյուրասիրութեաններ անի, հաշիվները ներկայացնելով վաճառատան: Սարայանը տանում ևր գնորդներին ընթրիքի, նրանք ուտում և խմում է յին, սպա կիսահարում գնում է յին պայմանավորված հանրատներից մեկը, վորտեղ մտի, իմիչքի և վավաչոտութեան անկարգ, արբեցուցիչ մթնոլորտում Սարայանն աջողում ևր գորգերի վորոչ պարտիայի ծախված յինելու համար գնորդի հետ վերջնական յեզրակացութեան գալ:

Աշրգրաշյանը բացի այն, վոր վաճառքի տոկոս ևր վճարում ծախողներին, մեծ տոկոս վճարում ևր և Սարայանին, բացի նրա ոտճիկից, վորովհետև վերջի վերջո Սարայանն ևր, վոր սպասովում ևր վերջնական վաճառքը:

Սարայանը հանրատներ ևր տանում իր հետ նաև իր գրսի մտերիմ ընկերներին՝ բացի պաշտոնական գնորդներից: Նրանք ներկայանում է յին այնտեղ իրեն Աշրգրաշյանի վաճառատան գնորդներ ավելի սանձարձակ և ավելի ընտանի, քան իսկական գնորդները: Աշրգրաշյանը չևր իմանում, իհարկե, վոր մեծ չափով վճարում ևր նաև Սարայանի մտերիմները և փոշ թև միայն գնորդների համար: Յեթև իմանար ևլ, վոչ մի նկատողութեան չևր անի նրան, վորովհետև Սարայանին կոչում ևր—«իմ վաճառատան սյունը»:

Աշրգրաշյանի համար իսկապես վոր Սարայանը «սյուն» ևր, վորովհետև նա ևր, վոր կապիտալիստական ահարկու աշխարհի մրցման ճիրաններում, կանգուն ևր պահում նրա փոքրիկ; ճղճիմ կապիտալը համեմատած այն հեքիաթային վոսկու տերերին, վորոնք Ամերիկայան կապիտալիստի հզորութեանն է յին կազմում:

Աշրգրաշյանն արդարացնում ևր իրան՝

— Ուրիշ կերպ չեմ կարող յերեակայել, սրանք կուտեն մեզ, ասում ևր և շարունակում ևր իր կաշին փրկել կապիտալի գազանային ճիրաններից:

Սարայանի ընկերները շատ է յին սիրում նրան, մինչև անգամ հարգում է յին: Յերբեմն Սարայանը գիշերային վակիտանալիայից հոգնած՝ այդ պաշտոնը թողնելու մասին միտք ևր հայտնում, իր ընկերներն անմիջապես գրա է յին տալիս:

— Բան չունե՛ս, հրաշալի գործ և:

Սարայանը շուրջըրթված յերկրորդ սրը հեռախոսում ևր նրանց «հանդիպել... համարում»: Նրանք հանրատները համարներով է յին կոչում:

Մի որ մեր վաճառատան սրահում մենք տկանատես յեղանք մի պատահարի: Սարայանը տակավին վաճառատուն չևր յեկել, յերբ մի ամերիկուհի մտավ ներս՝ յերկու մանուկներով միասին: Վաճառատան հին ծախողները սկսեցին իրար մեջ փոխալ, մինչ ամերիկուհին մի աթոռ վերցրեց և նրստավ, յերկու փոքրիկները կանգնեցին նրա սողաքին իրենց թաթիկները գնելով տիկնոջ ծնկներին: Ամերիկուհին ներս մտնելիս վո՛չ վոքի շքարեկեց, վոչ վոք էլ նրան շքարեկեց: Փոփոսկից իմացա, վոր նա Սարայանի կինն ևր: Տիկին Սարայանը ջահել մի կին ևր, բարձրահասակ, կապույտ, անմեղ աչքերով և վոսկեգույն մազերով: Մանուկները կարգապահ է յին և տխուր, մեկ-մեկ հառում է յին իրենց մոր աչքերին, մայրը շոյում ևր նրանց մազերը, թըչիկները, և ինչ-վոր բան ասում նրանց տկաններին: Աշրգրաշյանը ներս յեկավ և անցնելով տիկ. Սարայանի առաջից՝ բարեկեց նրան: Տիկ. Սարայանը բարեկ չիտխանակեց և դեմքը շուտ տվեց դժկամակութեամբ և զզվանքով: Աշրգրաշյանը մոտեցավ ձերուսի ծախողին, վորի հետ յես կանգնած ծխում է յի, և հարցրեց նրան:

— Ելի ի՞նչ և ուզում, ի՞նչ կա:

— Սկանդալ, պատասխանեց ձերուսին կարուկ:

— Այնպես պիտի անի, վոր իրեն էլ թողնի, պատասխանեց Աշրգրաշյանը և դժգոհութեամբ մտավ իր կարիները: 34

— Ուրեմն Սարայանի յերկրորդ, թերևս և յերրորդ կինն եր այդ համեստ և գեղեցիկ ամերկուհին, մտածում եյի յես:

Յես սկսեցի գրազվել մի թեթև հաճախորդի հետ, յերբ Սարայանը ներս մտավ: Յերևի նրան վոչ վոք չեր զգուշացրել կամ կարևորություն չեր ընծայել վորևէ զգուշացման:

— Ո՞ր, իմ սիրելիս, իմ մեկ հատիկս, բացականչեց Սարայանը և մոտեցավ:

Կինը յերկարած թեվերը յետ հրեց և դուայ.

— Ամո՞թ քեզ, այսոր հինգերորդ որն ե, վոր տանը չես յեղել, բավական ե, յես քո աղախինը կամ հարճը չեմ:

Սարայանը ջանաց հաշտության մի միջոց գտնել. սկսեց շոգոքորթիչ բառերի շոտյությունը, բայց տիկինը չարունակեց.

— Ի՞նչ ես ուզում ասել դրամ ուղարկելով ծառայի միջոցով, դու չե՞լ յեր կարող դալ:

— Շատ եմ գրազված, սիրելի, իհարկե, քեզ չեյի կարող առանց դրամի թողնել: Զրազված եմ, գիշեր և ցերեկ եմ գրազված, պատասխանեց Սարայանը:

— Ա՛յ ըս ուղարկած դրամը, դուայ տիկին Սարայանը և դուլարները չարանց իր ամուսնու յերեսին:

Մանուկները սկսեցին լաց լինել, յերբ տեսան, վոր իրենց մայրիկը հուզմունքից և ջղայնությունից չկարողացավ իրան գտել և սկսեց լաց լինել: Այլ ժամանակ Սարայանը գիմեց առևտրական տրամաբանության:

— Սիրելիս, դու միայն մի բան պետք ե հասկանաո, մնացածը հեշտ ե, դու պետք ե հասկանաո, վոր գրազված եմ:

— Ի՞նչ դորձ ունեա դու քաղաքի ամենասուր տներում, լացակամաց հարցրեց չվարած ամերկուհին:

— Հա՛, դա ե իմ գրազմունքը, սիրելի՛ս, գրանով եմ ապրում յես:

Ամերկուհին վոչինչ չկարողացավ ըմբռնել—լինել հանրատներում ապրելու համար—նա չոնց աչքերը խելագարի նման իր ամուսնու աչքերին և հանկարծ բղավեց.

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

— Ուզում եմ ասել, վոր յես այս վաճառատան ծառայողն եմ և դա իմ պաշտոնն ե: Կ՛՛՛՛՛

Տիկին Սարայանը բոլորովին իրան կորցրեց.

— Սրիկա՛, աղաղակեց և յերկու մանուկների ձեռքիցը բռնելով հեռացավ վաճառատնից:

Տիկինը հեռանալուց հետո Սարայանը մի պահ ապշած և մտախոհ մընաց, ապա մոտենալով ծախողներին՝ գլուխը յերեքցնելով՝ ասաց.

— Ա՛յս, կանա՛յք, կանա՛յք, վոչինչ չեն հասկանում, հե՞շտ ե դրամ վաստակել, յեղբայր, տունը դրամով եմ լցնում, վոչ մի բան պակաս չկա, ի՞նչ կա, մի քանի որ տուն չեմ գնացել, ի՞նչ անեմ, աշխարհը տակն ու վրա՞ յեկավ, ի՞նչ ե, գրազված եմ, այդ զահրումար գրադումն ել ցերեկը չի լինի:

Վո՛չ վոք նրան չպատասխանեց, միայն ծերունի ծախողն ասաց.

— Ամուսնանալու չեյիր.

— Մե՛կ ել ասա, մե՛կ ել ասա, դուայ Սարայանը և բուռնցքով գլխին խփելով՝ մտավ Աշըգբաշյանի կարնետը:

Յերբ Աշըգբաշյանն Արևելքից նոր ապրանք եր ստանում, նրա առաջին գործն եր կանչել քաղաքի ամենամեծ սրաթերթերի մեկի իր ծանոթ թղթթակիցներից և նրան պատվիրել այդ մասին մի կերպ թերթում հայտարարել: Սրաթերթի կիրակի սրվա թերթի այն բաժնում, վորտեղ բարձր բուրժուազիայի անտեսական գործունեության մասին եր գրվում—թեյի հրավերներ, Յեկրուպա ճամբորդություն, հարսանիք, նոր զգեստների պատվերները, չների մահ (տիկնոջ նկարով միասին) այցելություններ, կուրորտային լուրեր և այլն—այնտեղ հրատարակվում եր տիկին Աշըգբաշյանի նկարն այն լուրի հետ միասին, վոր տիկին Աշըգբաշյանը իր ամուսնու վաճառատան Արևելքից ստացած ամենաընտիր գորգերը ջուկել և տուն և տարել: Թղթակիցը ստանում եր մի չնչին դումար թերթից և մի խոշոր դումար Աշըգբաշյանից: Աշըգբաշյանը թերթի թղթակցին վճարած դումարը գրել եր տալիս որահաշվի բեկլամների բաժնում:

Մյուս սրը Նյու Յորկի միլիոնատերների կանայք լցվում եյին Աշըգբաշյանի վաճառատունն Արևելքից ստացած ապրանքները տեսնելու և գալիս եյին այն յեզրակացության, վոր լավագույն գորգերը տիկինն արգեն ջուկել ե:

— Այո՛, դժբախտաբար, ասում եր Աշըգբաշյանը:

Հաջորդ սրը Աշըգբաշյանը դուրս եր բերում իր պահած գորգերը, վորովհետև տիկին Աշըգբաշյանը վոչ թե վո՛չ մի գորգ չեր ջուկել, այլ նոր ապրանքները չեր ել տեսած, և ուղարկում եր զանազան տիկնանց փոքրիկ կարտով միասին թե. «տիկինը ցանկացավ գիշել իր ընտրած գորգերը ձեզ համար»:

Միլիոնատեր ամերկուհին շոգոքորթվում եր, ինչպես տնային կատուն և վճարում եր ինչ գին, վոր առաջարկվում եր նրան:

Յերկար ժամանակ եր, վոր Սարայանը ինձ չեր մոտենում, վորովհետև անձամբ ցույց տվի իմ գրվանքն իր տիկնոջ հանդեպ ունեցած վարձունքի մասին և վաճառատան մեջ ել աղատորեն խոսում եյի այդ մասին, բայց շատ կարևոր մի վաճառքի համար, մի վաճառք, վորը իմ ձեռքումն եր գանվում Սարայանը մոտեցավ ինձ:

— Ծանոթացրեք ինձ ձեր հաճախորդը, յես կվերջացնեմ խնդիրը, ասաց ինձ գոռոգությամբ.

— Քո գեղը քեզ պահի, պատասխանեցի արհամարհանքով, յես ինքս կվերջացնեմ այն առևտրական պարզ միջոցներով:

— Քո քիթը շատ ես բարձրացրել, կը կտրեմ յես քո քիթը, դուայ Սարայանը:

Ուսուցից յես անմիջապես գործի անցա և մի քանի բոկսով ուռեցրի նրա աչքը: Աշըգբաշյանը վաճառատնից դուրս եր, մյուսները բաժանեցին մեզ:

Յես ժգմբ Ե-ին դուրս յեկա Աշքրաշյանի վաճառատնից եւ ներս շմանելու փորձումով:

Յերեկոյան նստած մի կաֆեյում, մի բաժակ դարեջրի առաջ, մտածում էյի թե ինչքա՛ն կարող են մարդիկ այլանդակիլել, ինչքա՛ն կարող են իրենց հոգու դեմքը ծամածուկ ահափոր մրցման այս դարհուրելի պատերազմում:

Չանձրացա կաֆեյում, սկսեցի լրագիր կարդալ, աչքիս կպավ մի դասախոսութիւն «Ամերիկյան հարուստների և հարստութիւնների մասին»: Վերջեցի գնալ և լսել այդ դասախոսութիւնը: Յերբ սրահը մտա, դասախոսութիւնը սկսվել էր: Զարմացա, յերբ տեսա, վոր դասախոսն այն հույնն էր, վերին յես պատահեցի ստորերկրյա տրամվայում իրրե «գիշերուղ»: Սոսում էր կտորատված անդլերենով, բայց անկեղծ և վողկարված, սրահն ամբողջ լիքն էր բանվորներով: Նա խոսում էր այն մասին, վոր Միացյալ Նահանգների հարստութիւնը գտնվում է 27 մարդու ձեռքում, նա պատմում էր խարդախութիւն, կեղեքումի ահափոր պատմութիւններ: Այդ ահափոր կեղեքման գոհերը դուք եք, ասում էր հույնը, կաղմակերպվեցե՛ք և թույլ մի տաք, վոր կողոպտեն ձեզ աշխարհի ծուլերը և այլասեովածները:

Յերբ դասախոսութիւնը վերջացավ, մտտեցա հույնին.

— Ա՛հ, յես ասացի քեզ, վոր մենք կպատահենք իրար:

— Յես հիմա հասկանում եմ քեզ, պատասխանեցի, յես այդ հարուստների խարդախութիւն, ցոփութիւն և կեղեքումին հանդիպեցի:

— Տեսնո՞ւմ ես այս բանվորներին, կառուցողներ են, սրանք, սրանք են, վոր կառուցում են Նյու Յորկի վիթխարի շէնքերը և իրենք սպրում են նրկուղներում կամ յերկնքից հաշվելով՝ առաջին հարկը: Մի քիչ լուսթյունից հետո՝

— Գնանք, ասաց հույնը:

Մենք գնացինք բանվորական թաղը, ուր գտնվում էր հույնի փոքրիկ աւնյակը:



4122 6 50 489.

207

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

31.386